13577

-Ի ՊԵՏՊԼԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՇՎԱՌՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

311
Հ-94

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂՏՆՏՀԱՇՎԱՌՔ
ԵՐԵՎԱՆ 1940

25 SEP 2006

ԽՍՀՄ-Ի ՊԵՏՊԼԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.

Арм.
3-4392а
311
Հ-94

# ՀՐԱՀԱՆԳ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՍԿԲԶՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Инв. № 15933

Гос. Публичная Библиотека в Ленинграде

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂՏՆՏՀԱՇՎԱՌՔ
ԵՐԵՎԱՆ 1940

14 JUN 2013
13577
290-87

# ՑԱՆԿ

—ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության 13/10-1939 թ. №-10-802 հրամանը.—

— ԽՍՀՄ ԺԿԽ-ի 26/1-1934 թվի վորոշումը գյուղական խորհուրդների սկզբնական հաշվառման մասին:

—Գյուղական խորհուրդների սկզբնական հաշվառման ձևերի ցուցակը:

— Հաշվառման սիստեմը գյուղխորհուրդներում և տնտեսությունների հաշվառումը:

— Տնտեսությունների հաշվառման փաստաթղթերը:

— Կոլտնտեսության հիմնական արտադրական ցուցանիշների հաշվառման մատյան ձև № 1:

— Գյուղխորհուրդներում հաշվի առնվող տնտեսությունները:

—Տնտեսությունների գրքերում անձնական հաշիվները բաց անելու կարգը:

— Տնտեսությունների ձև №№ 2, 3 գրքերի և ձև № 2 ցուցակի լրացումը:

— Ժամանակավորապես ապրող բնակչության հաշվառումը:

— Բնակչության բնական շարժման հաշվառումը:

— Գյուղատնտեսության հաշվառումը:

— Բնակչության աշխատանակցության կարգով անց կացվող ճանապարհային շինարարության հաշվառումը:

— Կազմակերպչական-մասսայական աշխատանք:

— Նոտարական գրքի վարման կանոնները:

# ՀՐԱՄԱՆ

ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վ ա ր չ ո ւ թ յ ա ն

№ 10–802

ՔԱՂ. ՄՈՍԿՎԱ 13–Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1939 ԹՎ.—

Գյուղական խորհուրդների սկզբնական հաշվառման ձևերը հաստատելու մասին։

I. ԽՍՀՄ ԺԿԽ–ի 26/ 1-1934 թ. վորոշման հիման վրա հաստատել գյուղական խորհուրդների սկզբնական հաշվառման հետևյալ ձևերը՝

1 /Ձև № 1– Կոլտնտեսության հիմնական արտադրական ցուցանիշների հաշվառման մատյան 1940 / 42 թ. թ. համար։

2 / Կոլտնտեսականների տնտեսությունների հիմնական արտադրական ցուցանիշների տնտեսական գիրք 1940 / 42 թ. թ. համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հեռավոր հյուսիսի տնտեսությունների հաշվառման համար ընդհանուր տիպի տնտեսությունների գրքի փոխարեն հաստատել հատուկ գիրք— ձև № 2։

3 / Ձև № 3 մենատնտեսների տնտեսությունների հիմնական արտադրական ցուցանիշների տնտեսական գիրք։

4 / Ձև № 4—գյուղխորհրդի կողմից միավորվող տնտեսությունների ցուցակ։

5 / 4 ա գյուղխորհուրդի տերիտորիայի վրա ժամանակավորապես բնակվող անձանց ցուցակ։

II. Միութենական հանրապետությունների ԺՏՀՎ–ները տնտեսությունների գրքեր ձև № 2, 3 և կոլտնտեսության մատյան ձև № 1–ը պատրաստելիս պետք է ապահովեն ջրովի և անջրդի հողերի ու ցանքերի, տեղական կուլտուրաների և անասունների տեղական տեսակների, հաշվառումը, չերամապահության հաշվառումը, ձկնորսական կոլտնտեսությունների համար՝ ձկնորսաքարների հաշվառումը, մասսայական անտառամթերումների շրջանների կոլտնտեսությունների համար՝ անտառամթերումների հաշվառումն ըստ պայմանագրերի և կոլտնտեսության սեփական կարիքների համար «ըստ պլանի և փաստացի»։



III. Թողնել նայև 1940 թվի համար Ձագսի, գյուղատնտեսության, ֆինանսական գործունեյության, աշխատանակցությամբ կատարվող ճանապարհային շինարարության, գյուղական խորհրդի կազմակերպչական և նոտարական աշխատանքի հաշվառման հաշվային փաստաթղթերի գոյություն ունեցող ձևերը, բացի ձև № 33–ա–ից՝ «ինքնահարկման ներգրավող տնտեսությունների ցուցակ», վորի մեջ նախատեսնել, բացի պարտադրման հաշվառումից, նաև ինքնահարկման մուծման հաշվառումը։

ԽՍՀՄ ՊԵՏՊԼԱՆԻ

ԺՏՀԿՎ–Ի ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ —ՇԻՐԻՆՍԿԻՅ

## ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀ Միութ-յան ժողովրդական Կոմիսարների խորհրդի. գյուղական խորհուրդների սկզբնական հաշվառման մասին։

Գյուղական խորհուրդներում տարվող սկզբնական հաշվառումը կարգավորելու և պարզեցնելու նպատակով, ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհուրդը վորոշում է՝

1 / Հաստատել գյուղական խորհուրդների հաշվառման ձևերի ու սկզբնական փաստաթղթերի ցուցակը 1934 թվի համար։

2 / Սույն վորոշմամբ հաստատված ցուցակում գյուղական խորհուրդների սկզբնական հաշվառման նշված յուրաքանչյուր ձևը պետք է հաստատված և ստորագրված լինի ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության /ԺՏՀԿՎ–ի/ պետի կողմից, առանց վորի ստորագրության նա համարվում է անորինական։

3 / Պարտավորեցնել միութենական և ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, յերկրային և մարզային գործադիր կոմիտեներին, սույն վորոշմամբ սահմանված սկզբնական հաշվառման ձևերը, բացի

պետական պարտավորությունների կատարման հաշվառման տնտեսությունների գրքից, գործածության մեջ դնել ոչ ուշ քան 1934 թ. ապրիլի 1-ը:

Պետական պարտավորությունների կատարման հաշվառման տնտեսությունների գիրքը գործածության մեջ դնել ոչ ուշ քան 1934 թ. հուլիսի 1-ը: /Ուկրաինական ԽՍՀ-ում պետական պարտավորությունների կատարման հաշվառման գիրքը կարող է գործածության մեջ դրվել ապրիլի 1-ից/

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Թույլատրել միութենական և ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, յերկրային և մարզային գործադիր կոմիտեներին՝ մինչև հաշվառման նոր ձևերն ու գրքերն ստանալը, գյուղխորհուրդներում սկզբնական հաշվառում տանել այն ձևերով, վորոնք մտցվել են առանձին ժողովրդական կոմիսարիատների և կենտրոնական վերատեսչությունների կողմից և հաստատվել են ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության կողմից:

4/ Սահմանել, վոր գյուղական խորհուրդների հաշվառման ձևերի և սկզբնական փաստաթղթերի ցուցակը /կետ 1-ին/ չի կարող փոփոխվել առանց ԽՍՀՄ ԺԿԽ-ի թույլտվության:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Իրավունք վերապահել ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության /ԺՏՀԿՎ-ի/ պետին առանձին հանրապետությունների, յերկրների ու մարզերի, տեղական առանձնահատկություններից յելնելով, գյուղական խորհուրդների սկզբնական հաշվառման ձևերում մտցնելու պարզեցումներ և ճշտումներ առանց ընդարձակելու հաշվառման ձևերի ցանկը:

5/ Պարտավորեցնել ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչությանը՝ շահագրգռված ժողովրդական կոմիսարիատների մասնակցությամբ մեկ ամսվա ընթացքում հրատարակելու հրահանգ գյուղական խորհուրդներում տարվելիք սկզբնական հաշվառման մասին սույն վորոշման հիման վրա հաստատված սկզբնական հաշվառման ձևերին համապատասխան:



6. Սույն վորոշման հիման վրա հաստատված սկզբնական հաշվառման ձևերը հանդիսանում են գյուղական խորհուրդների պաշտոնական փաստաթղթեր և պետք է տարվեն ԽՍՀՄ Պետպլանի Ժողովրդական Տնտեսության Հաշվառման կենտրոնական վարչության հրահանգներին խիստ համապատասխան:

Հաշվառման այդ փաստաթղթերում չի թույլատրվում վոչ մի ջնջում և ուղղում, առանց այդ մասին համապատասխան գրավոր նշում կատարելու:

Գյուղական խորհուրդների բոլոր հաշվային փաստաթղթերը պետք է պահվեն դրամական փաստաթղթերի և արժեքավոր թղթերի հետ համահավասար: Նրանց անվնասությունը, գրանցումները ժամանակին ու ճիշտ կերպով կատարելու պատասխանատվությունը դրվում է անձնապես գյուղական խորհրդի քարտուղարի վրա, վորն այդ կանոնը խախտելու դեպքում յենթարկվում է քրեական պատասխանատվության:

7. Պարտավորեցնել շրջանային գործադիր կոմիտեներին և ժողովրդական տնտեսության հաշվառման շրջանային տեսուչներին պարբերաբար հրահանգավորել գյուղական խորհուրդները սկզբնական հաշվառման դրվածքի մասին և հետևել նրա ճիշտ վարելուն:

Պարտավորություն դնել ժողովրդական տնտեսության հաշվառման տեսուչների վրա անմիջապես տեղեկացնել դատախազության մարմիններին հաշվառման գործում խանգարում կամ աղավաղում առաջացնող բոլոր նկատված ի չարը գործադրելու և անփութության դեպքերի մասին, վորոնք կարող են պատճառ հանդիսանալ հաշվառման գործի կազմալուծման կամ աղավաղման, հանցավորներին պատասխանատվության յենթարկելու համար:

8. Պարտավորեցնել ԽՍՀ Միության մատակարարման, թեթև արդյունաբերության, հողագործության և ֆինանսների ժողովրդական կոմիսարիատներին, ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից գյուղատնտեսական մթերքների մթերման կոմիտեյին և խճուղային ու գրունտային ճանապարհների ու ավտոմոբիլային տրանսպորտի կենտրոնական վարչությանը՝ ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության հետ համաձայնեցնելով մեկ ամիս ժամանակամիջոցում վերանայել իրենց տարբեր օրգաններին հաշվառման կարգի մա–

մշակված հրահանգները, համապատասխանեցնելով նրանք սույն վորոշմամբ հաստատված գյուղական խորհուրդների հաշվառման ձևերին և կարգին:

9. Առաջարկել ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչությանը քսան օրյա ժամանակամիջոցում ուղարկել միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, յերկրային և մարզային գործադիր կոմիտեներին գյուղական խորհուրդների սկզբնական հաշվառման ձևերի և գրքերի նմուշները:

10. Պարտավորեցնել միութենական և ավտոնոմ հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, յերկրային և մարզային գործադիր կոմիտեներին՝

ա) Ապահովել սկզբնական հաշվառման բոլոր հաստատված ձևերի (գրքերի և բլանկների) բացի բ կետում նշվածներից, և հրահանգների տպագրումն ու մատակարարումը Գյուղխորհուրդներին, վոչ ուշ քան 1934 թ. 15/3-ի:

բ) Ապահովել պետական պարտավորությունների կատարման հաշվառման տնտեսության գրքի տպագրելն և ուղարկելը 1934 թ. հունիսի 1-ին:

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺԿԽ-Ի ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Վ. ԿՈՒՅԲԻՇԵՎ.

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 1934 Թ. № —105

ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ Ե «ԽՍՀՄ ԿԳԿ-Ի ՅԵՎ ՀԿԳԿ-Ի ԻԶՎԵՍՏՅԱ» № —23

28 Հունվարի 1934 թ.

## ՑԱՆԿ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ 1940 Թ. ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԻ.

### I ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՅԵՎ ԳՐՔԵՐԸ

| № ըստ կարգի | ձևերի №№-ը | ՁԵՎԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ |
|---|---|---|



1. 1. Կոլտնտեսության հիմնական արտադրական ցուցանիշների հաշվառման մատյան:

2. 2. Կոլտնտեսականների տնտեսությունների հիմնական արտադրական ցուցանիշների տնտեսությունների գիրք (այս ձևով տարվում է նաև մշտապես ապրող բանվորների և ծառայողների տնտեսությունների հաշվառումը), գյուղխորհրդի տերիտորիայի վրա մշտապես ապրող և չինություններ, տնատեղ և ցանք չունեցող բանվորների ու ծառայողների ընտանիքների հաշվառման համար ցուցակ ձև № 2-ի կցումով:

3. 3. Մենատնտեսների տնտեսությունների հիմնական արտադրական ցուցանիշների տնտեսությունների գիրք:

4. 4. Գյուղխորհրդի կողմից միավորվող տնտեսությունների ցուցակ:

5. 4. ա. Գյուղխորհրդի տերիտորիայի վրա ժամանակավորապես բնակվող անձանց ցուցակ:

### II ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

6. 5. Ակտ ծննդյան մասին

7. 6. Ակտ մահվան մասին

8. 7. Ակտ ամուսնության մասին:

9. 8. Ակտ ամուսնալուծության մասին:

10 10 Հայտարարություն հայրությունը ճանաչելու մասին

11 11 Վկայական ծննդյան մասին

12 12 Վկայական մահվան մասին

13 13 Վկայական ամուսնության մասին:

14 14 Վկայական ամուսնալուծության մասին:

### III ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ.—

15 17-ա Յեզրափակիչ հաշվետվություն կոլտնտեսականների, մենատնտեսների, բանվորների և ծառայողների տնտեսություններում ընթացիկ տարվա բերքի տակ կատարված ցանքի հանրագումարների մասին:

16 18 Գյուղատնտեսական կամպանիայի ընթացքի հաշվառման մատյան:

17 19 Ձիերի անցագրերի գրանցման գիրք.

18 19–ա Կոլտնտեսային տնտեսությունների ցուցակ անասնապահության զարգացման և հորթերի կոնտրակտացիայի Պետական պլանի իրացման մասին։

## IV ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՅՈՒԹԵՂԵՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

19 20 Ինքնահարկման վճարման ծանուցագիր

20 22–ա Դրամական վոչ հարկային վճարումների անդորրագիր։

21 23 Ինքնահարկման դրամական մուտքերի ուրագիր (ցուցակ)։

22 26 Դրամարկղային գիրք, վճարումների անդորրագրային գրքույկների հաշվառման տեղեկագրի հետ։

23 27–ա Գյուղական բյուջեյի յեկամուտների տեղեկագիր։

24 27–բ Գյուղական բյուջեյի ծախսերի տեղեկագիր։

25 28 Զանազան գումարների և հաշվարկների առհաշիվ անձանց գիրք։

26 30 Գույքացուցակ

27 30–ա Նյութեղենների հաշվառման գիրք։

28 31 Աշխատավարձի վճարման տեղեկագիր։

29 32 Ավանսային հաշվետվություն

30 33 Պետական բանկ փոխանցվող գումարների ուղեկցող տեղեկագիր։

31 33–ա. Ինքնահարկման յենթարկվող տնտեսությունների ցուցակ։

32 34 Թոշակների վճարման տեղեկագիր։

## V ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՒՆԵՑԱԾ ԱՇԽԱՏԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.—

33 46 Ճանապարհային շինարարության աշխատանակցության ծանուցագիր։

34 47 Ճանապարհային շինարարության աշխատանքների ղեկավարի տաբել

## VI ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

35 50 Գյուղական խորհուրդների արձանագրության գիրք։



## VII ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

36 57 Ակտ անասունի անկման մասին

37 60 Նոտարական գործողությունների գիրք։

38 — Տնտեսությունների այբբենական գիրք.

## ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՈՒՄ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.

Հաշվառման սիստեմը գյուղխորհուրդում հանգում է հետևյալ հիմնական հատվածների՝ տնտեսությունների, բնակչության շարժման, գյուղատնտեսության, ֆինանսական, ճանապարհային շինարարության, կազմակերպչական-մասսայական աշխատանքի և գյուղխորհրդի նոտարական աշխատանքի հաշվառում։

ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թվի հունվարի 26-ի № 05 վորոշմամբ սահմանված հաշվառման և սկզբնական փաստաթղթերի սիստեմը պարտադիր է բոլոր գյուղխորհուրդների համար։ Կառավարության վորոշմամբ նախատեսնված սկզբնական հաշվառման բոլոր ձևերը գյուղխորհրդի պաշտոնական փաստաթղթեր են հանդիսանում։

Հաշվառումը գյուղխորհուրդում պետք է տարվի ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության սույն հրահանգին ճիշտ համապատասխան, յեվ առանց ԺՏՀԿՎ-ի պետի հատուկ թույլտվության նրանից շեղումներ կատարելը չի թույլատրվում։

Գյուղխորհուրդների հաշվառման և փաստաթղթերի սահմանված ձևերը փոխելու իրավունքը ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից տրված է միայն ԽՍՀՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության (ԺՏՀԿՎ-ի) պետին։

Բոլոր առաջարկությունները հաշվառումը պարզեցնելու, լավացնելու և ճշտելու մասին պետք է ուղղվեն Ժողովրդական Տնտեսության Հաշվառման մարզային և հանրապետական վարչությունները, կամ անմիջականորեն ԽՍՀՄ Պետպլանի Ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչություն (Մոսկվա Բ. Վուզովսկի Պերեուլոկ № — 2)։ Մինչև

ԺՏՀԿՎ-ի պետի թույլատրելը, այդ առաջարկները կիրառվել չեն կարող։

Բոլոր գրանցումները գյուղխորհուրդների հաշվային ձևերի և փաստաթղթերի մեջ պետք է կատարվեն խնամքով, վոչ մի ջնջում և մաքրում այդ փաստաթղթերում չի թույլատրվում։ Յեթե վորևէ գրանցում ճիշտ չի արված, ապա գրվածը գծվում է թանաքով և գծվածի վերևը գրվում է ուղղականը։ Կատարված ուղղման մասին յուրաքանչյուր փաստաթղթի վրա և հաշվային ձևում արվում է հիշատակում, վորը վավերացվում է գյուղխորհրդի քարտուղարի ստորագրությամբ։

Կառավարության վորոշումը պարտավորեցնում է գյուղխորհուրդներին պահպանել բոլոր գրքերը և այլ հաշվային փաստաթղթերը դրամական փաստաթղթերին և արժեքավոր թղթերին հավասար։

ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թվի 26-ին հունվարի № —105 վորոշմամբ, հաշվային փաստաթղթերի անվնասության, նրանց ժամանակին և ճիշտ վարելու պատասխանատվությունը դրված է անձամբ գյուղխորհրդի քարտուղարի վրա, վորը հաշվառման սահմանված կանոնները խախտելու, հաշվային փաստաթղթերը անխնամ պահելու և նրանց կորցնելու համար կրում է քրեական պատասխանատվություն։

ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թվի հունվարի 26-ի № 105 վորոշմամբ, շրջանային գործադիր կոմիտեների և ժողտնտհաշվառման շրջանային տեսուչների վրա պարտականություն է դրված պարբերաբար հրահանգավորել գյուղական խորհուրդները սկզբնական հաշվառման դրվածքի մասին և հետևել նրա ճիշտ վարելուն։

Համաձայն ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934 թ. դեկտեմբերի 3-ի № 2663 վորոշման, սկզբնական հաշվառման գրքերի և ձևերի բլանկների պատրաստումն և նրանցով գյուղխորհուրդներին մատակարարելը դրված է միութենական և ավտոնոմ հանրապետությունների (յերկրային կամ մարզային բաժանում չունեցող) ժողովրդական կոմիսարների խորհուրդների, յերկրային և մարզային գործադիր կոմիտեների վրա։

Գյուղական խորհուրդները ստանում են գրքերը և բլանկները շրջանային գործադիր կոմիտեի համապատասխան բաժին-



ներից, տնտեսությունների գրքերը, արձանագրությունների գիրքը և նոտարական գիրքը— ընդհանուր բաժնից, փաստաթղթերը քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար՝ ՆԳԺԿ-ի Զագս-ի շրջանային բաժիններից, գյուղատնտեսության հաշվառման համար—շրջանային հողային բաժնից, ֆինանսական հաշվառման համար—շրջնային ֆինանսական բաժնից, ճանապարհային շինարարության հաշվառման համար—շրջանային ճանապարհային բաժնից։

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ.—

Գյուղխորհուրդներում գործում են ԽՍՀՄ ԺԿԽ-ի կողմից 11/8 1931 թվի հաստատված ձևերի ցուցակում նախատեսնված տնտեսությունների հաշվառման գրքերը և ցուցակները, այն է՝

Ձև № 1—«Կոլտնտեսությունների հիմնական արտադրական ցուցանիշների հաշվառման մատյան», վորը տարվում է յուրաքանչյուր կոլտնտեսության համար առանձին։

Ձև № 2—«Կոլտնտեսականների տնտեսությունների հիմնական արտադրական ցուցանիշների տնտեսության գիրք» այս նույն ձևով հաշվի յեն առնվում նաև մշտապես ապրող բանվորների և ծառայողների տնտեսությունները։ Գյուղխորհրդի տերիտորիայի վրա մշտապես ապրող, բայց շինություններ, տնատեղ և ցանք չունեցող բանվորների և ծառայողների ընտանիքների հաշվառումը տարվում է ձև № 2 ցուցակի կցումով։

Ձև № 3 «Մենատնտեսների տնտեսությունների հիմնական արտադրական ցուցանիշների տնտեսության գիրք»։

Ձև № 4—«Գյուղխորհրդի կողմից միավորվող տնտեսությունների ցուցակ»։

Ձև № 4—ա «Գյուղխորհրդի տերիտորիայի վրա ժամանակավորապես ապրող անձանց ցուցակ»։

Տնտեսությունների հաշվառման ուժանդակ փաստաթուղթ է հանդիսանում այբենական գիրքը (Ալֆավիտ)։

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ ՁԵՎ № 1

Կոլտնտեսության մատյանը պետք է լրացնի գյուղխորհրդի քարտուղարը կոլտնտեսության փաստաթղթերի հիման վրա։

Մատյանը լրացնելիս պետք է գրանցել կոլտնտեսության

մանրամասն անունը, բնակավայրը, վորտեղ գտնվում է կոլտնտեսության վարչությունը, յերբ է կազմակերպված կոլտնտեսությունը, յերբ է ընդունված նոր կանոնադրությունը, տնտեսության գլխավոր ուղղությունը, վոր ՄՏԿ-ի կողմից է սպասարկվում:

6-րդ կետում պետք է թվել կոլտնտեսության բոլոր ապրանքային ֆերմաները:

2-րդ հատվածը «կոլտնտեսության կազմ» լրացվում է տարեկան յերկու անգամ: Տնտեսությունների թիվն առ 1-ն հունվարի գրանցվում է կոլտնտեսության տարեկան հաշվետվությունից և այդ հատվածի ցուցանիշները պետք է համընկնեն կոլտնտեսությունների հաշվառման տվյալների հետ: Տնտեսությունների թիվն առ 1-ն հուլիսի (առաջին կիսամյակում) լրացվում է կոլեկտիվացման ընթացքի մասին միանվագ հաշվետվության տվյալների հիման վրա (կոլտնտեսային հաշվետվության ձեվ № 1):

3-րդ հատվածը «Կոլտնտեսային տնտեսությունների անդամակցությունը» լրացվում է առ 1/1 կոլտնտեսության տարեկան հաշվետվությունից, իսկ առ 1/7 կոլտնտեսության ցուցակներից:

4-րդ հատվածում, «Ոժանդակ ձեռնարկությունների ցուցակ», գրանցվում են կոլտնտեսության բոլոր ոժանդակ տնտեսություններն առ 1-ն հունվարի դրությամբ, իսկ «տրված է արտադրանք», ցուցանիշը լրացվում է անցած տարվա վերաբերյալ: Ոժանդակ ձեռնարկությունների արտադրանքը գրանցվում է բնական արտահայտությամբ, իսկ այնտեղ, վորտեղ այդ անհնար է—դրամական:

5-րդ հատվածում՝ «կուլտ-կենցաղային հիմնարկների ցուցակ», պետք է գրանցել մսուրները (սեզոնային կամ մշտական) մանկական հրապարակները, ակումբը, կարմիր անկյունները, գրադարանը, (գրքերի թիվը), ընթերցարանը, կինո, ճաշարանը, վարսավիրանոցը, բաղնիքը և այլն:

6-րդ հատվածը «կոլտնտեսության կառուցումները» և 7-րդ հատվածը «հիմնական մեքենաները և գյուղատնտեսական ու արհեստագործական ինվենտարը» լրացվում են կոլտնտեսության փաստաթղթերից:



8-րդ հատվածը՝ «կոլտնտեսության հողը», լրացվում է կոլտնտեսության հողը կոլտնտեսությանը մշտական ոգտագործման հանձնելու ակտից և տարեկան հաշվետվությունից, տվյալներն ըստ հողատեսքերի բաշխման մասին վերցվում են կոլտնտեսության յերիզած (շնուրովոյ) գրքից.

Կոլտնտեսության մատյանում (ձեվ № 1) հողի մասին աղյուսակը լրացնելիս՝ –ին տողում՝ «ընդամենը հող» գրանցվում է կոլտնտեսության հանրային ոգտագործման տակ գտնվող հողի ընդհանուր տարածությունը:

2-րդ տողում «ընդամենը տնամերձ» գրանցվում է կոլտնտեսության տնատեղի սահմաններում գտնվող ամբողջ հողը (հանրային տնատեղի տակ):

3-րդ տողում «շինությունների և բակի տակ» գրանցվում է միայն հանրայնացած շինությունների և բակերի տակ գտնվող կոլտնտեսության տնամերձ հողը:

4, 5 և 6-րդ տողերում, «բանջարանոց», «պտղատու այգիներ» և «խաղողի այգիներ» գրանցվում է միայն կոլտնտեսության հանրայնացրած բանջարանոցներով, պտղատու այգիներով և խաղողի այգիներով զբաղեցրած, կոլտնտեսության տնամերձ հողը. բոլոր առանձին ընկած բանջարանոցները, պտղատու և խաղողի այգիները ցույց են տրվում 9-12-րդ տողերում:

17-18-րդ ազատ տողերում ցույց են տրվում հողատեսքերի այլ տեսակները, վորոնց առանձնացումը գյուղխորհուրդը գտնում է անհրաժեշտ:

Ջրովի հողագործության շրջանում, բոլոր տողերում ցույց տրված հողատեսքերի ընդհանուր տարածությունից, «այդ թվում ջրովի» ցուցանիշներում առանձին ցույց տալ ջրովի հողերը ըստ հողատեսքերի:

19-րդ տողում գրանցվում է կոլտնտեսականների անհատական ոգտագործման տակ գտնվող, շինություններով, բանջարանոցներով, պտղատու, խաղողի այգիներով և այլնով զբաղեցրած տնամերձ հողը:

20-րդ տողում գրանցվում է նոր կոլտնտեսային տնտեսությունների տնամերձ հողային ֆոնդը, 21-րդ տողում կոլտնտեսության այլ հողերը:

Յեթե հունվարի 1-ից հետո կոլտնտեսությունում տեղի

կումենսան հողի ընդհանուր տարածության կամ միայն հողատեսքերի կազմի մեջ որևէ փոփոխություններ աղյուսակի հաջորդ սյունյակում նորից տեղեկություններ են տրվում ամբողջ հողի մասին ըստ բոլոր հողատեսքերի, այլ ոչ թե միայն ըստ այն հողատեսքերի, որոնց նկատմամբ փոփոխություն է կատարվել:

9-րդ հատվածը «պտղատու այգիների և հատապտուղների տնկիներ» և 10-րդ հատվածը «մեղվաբուծություն» լրացվում է ըստ կոլտնտեսության փաստաթղթերի:

11-րդ հատվածում «կոլտնտեսության ցանքերը» գրանցվում է պլանը, որը սահմանված է կոլտնտեսության համար շրջհողբաժնի կողմից: Այդ տվյալները գյուղխորհուրդը գրանցում է անմիջականորեն կոլտնտեսության վարչությունում: Իսկ փաստացի ցանքը գրանցվում է գարնանացանն ավարտելուց հետո, ցանքերի տարածության հաշվառման կոլտնտեսության յեզրափակիչ հաշվետվությունից (ձև № 4):

Ջրովի անտեսություն ունեցող հանրապետություններում և մարզերում, ջրովի ցանքերը պետք է ցույց տրվեն առանձին: Տեսակավոր ցանքերը լրացվում են կոլտնտեսային հաշվետվության № 5 ձևից:

12-րդ հատվածը «կոլտնտեսության անասունները» առ 1/1 և առ 1/7-ի լրացվում են ըստ կոլտնտեսության տվյալների: Այդ հատվածում գրանցվում են ապրանքային ֆերմաներում և նրանցից դուրս գտնվող կոլտնտեսության հանրայնացրած անասունները. առ 1-ը հունվարի տվյալները վերցվում են տարեկան հաշվետվությունից:

13-րդ հատվածը «անասնապահության զարգացման պլանը և նրա կատարումը», լրացվում է Շրջգործկոմի կողմից հաստատված անասնապահության զարգացման պլանի կերի բազայի զարգացման և կոլտնտեսության կառուցումների շինարարության առաջադրանքի հիման վրա, իսկ պլանի կատարումը նշվում է կոլտնտեսային փաստաթղթային տվյալների հիման վրա ըստ նրա կատարման չափի:

14-րդ հատվածի «կոլտնտեսականների ապահովածությունն անասուններով» լրացվում է անասունների առ 1/1 հաշվառման տվյալներով, որոնք գյուղխորհրդի քարտուղարը պետք է



290-87

դուրս գրի ժողտնտհաշվառման շրջանային տեսուչի նյութերից հաշվառումն ավարտելուց անմիջապես հետո, կամ ըստ տնտեսությունների գրքերի:

15-րդ հատվածը «չերամապահություն» լրացվում է չերամապահության պլանը շրջանային Գործադիր Կոմիտեի կողմից վերջնականապես կոլտնտեսությանը իջեցնելուց և կոլ. տնտ. վարչության կողմից որպես վերջնական պլան ընդունվելուց և արտադրական պլանների մեջ մտնելուց հետո. այդ պլանի համաձայն Հայմետաքս տրեստի ցանցի կողմից կոլտնտեսության հետ կնքվում է կոնտրակտացիոն պայմանագիր, որի մեջ բացի Գործադիր Կոմիտեի իջեցրած և կոլտնտեսության վարչության ընդունած պլանից, նշվում է խնամվող գրենայի չափի, խնամքի, սպասվելիք բերքի, քանակի ու բոժոժի արժեքի մասին.

Առաջին սյունակում (գրենայի բաշխումը տուփերով) գրանցվում է կոլտնտեսության տրված պլանը տուփերով, իսկ յեթե պլանը մեկ տուփից քիչ է գրանցվում է այսպես, օրինակ՝ 0,2 տուփ, 0,3 տուփ, 0,5 տուփ և այլն:

Յերկրորդ սյունակում գրանցվում է փաստացի կատարվածը—այսինքն տրված գրենայի պլանից որքան է արթնացրված Յերրորդ սյունակում բոժոժի մթերում (կիլոգրամներով) գրանցվում է պայմանագրում նախատեսված պլանը, իսկ 4-րդ սյունակում՝ փաստացի ստացված բոժոժի քանակը (կիլոգրամներով):

5-րդ սյունակում գրանցվում է նախատեսված սպասվելիք միջին բերքը մեկ տուփից և 6-րդ սյունյակում 1 տուփից փաստացի ստացված բոժոժի միջին բերքը:

Մասսայական անտառամթերումների շրջանների կոլտնտեսությունների և ձկնորսական կոլտնտեսությունների համար մտցված են լրացուցիչ հատվածներ: Անտառամթերումները, որոնք կոլտնտեսությունն անց է կացնում անտառատնտեսության հետ փոխադարձ պայմանագրի կարգով, հաշվի յեն առնվում ամիսը մեկ անգամ, կամ յեռամսյակը մեկ անգամ, տեղի պահանջների համեմատ, իսկ անտառամթերումները կոլտնտեսության կարիքների համար հաշվի յեն առնվում տարեկան մեկ անգամ:

Ձկնորսությունները և ձկնորսական ինվենտարը ձկնորսա-

կան կոլտնտեսություններում հաշվի յեն առնվում առ 1/1 գրությամբ:

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԻ ԱՌՆՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսությունների գրքերում հաշվի յեն առնվում այն տնտեսությունները, վորոնց անդամները համարվում են գյուղխորհուրդի մշտական բնակչությունը:

Գյուղխորհուրդի մշտական բնակչություն են համարվում այն քաղաքացիները, վորոնք տվյալ Գյուղխորհուրդի տերիտորիայի վրա ունեն անձնական տնտեսություն, այսինքն ունեն կամ շինություն, կամ տնամերձ հող, կամ ցանք, կամ այդ բոլորը միասին և վորոնք մշտապես բնակվում են տվյալ գյուղխորհրդի բնակավայրերից մեկում և չունեն մշտական բնակության այլ վայր: Այդ դեպքում այդպիսի տնտեսությունները գրանցվում են ձեվ № 2 տնտեսությունների (կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, կոոպերացված տնայնագործների տնտեսությունների գրքում, կամ ձեվ № 3 մենատնտեսների, չկոոպերացված տնայնագործների, ազատ պրոֆեսիայի անձանց, ինչպես նաև կրոնական պաշտամունքի սպասավորների տնտեսությունների) գրքում: Յեթե գյուղխորհուրդի տերիտորիայի վրա մշտական բնակվող բանվորի կամ ծառայողի ընտանիքը չունի սեփական կառուցում, ինչպես նաև տնամերձ հող և ցանք, և յեթե նման ընտանիքների թիվը բավականին մեծ է, ապա նրանք հաշվառման յեն յենթակա վոչ թե ձեվ № 2 գրքի, այլ ձեվ № 2 ցուցակի մեջ, վորն ունի հաշվառման նույնպիսի ցուցանիշներ, ինչ և ձեվ № 2 գիրքը, բայց ավելի կրճատ ձեվով: (Այդ կարգը սահմանված է գրքերում թուղթը տնտեսելու համար: Մարզերի յերկրների և հանրապետությունների ցուցակը, վորտեղ թույլատրվում է օգտվել ձեվ № 2 ցուցակներով, սահմանվում է ԺՏՀԿՎ-ի կողմից: Այն մարզերը, վորոնց ԺՏՀԿՎ-ն չի թույլատրել օգտվել ձեվ № 2 ցուցակով, չեն ստանա այդ ցուցակների բլանկները և բանվորների ու ծառայողների առանց բացառության բոլոր տնտեսությունների հաշվառումը պարտավոր են անել տնտեսությունների գիրք ձեվ № 2-ով):



№ 2 և № 3 ձեվերի յուրաքանչյուր անձնական հաշվի մեջ գրանցվում է մեկ տնտեսություն:

Մեկ տնտեսություն են համարվում միասին ապրող ազգականները, վորոնք վարում են ընդհանուր տնային տնտեսություն: Ընտանիք չունեցող միայնակը նույնպես հաշվի է առնըվում վորպես առանձին տնտեսություն:

Կոլտնտեսականների № 2 գրքում գրանցվում են այն կոլտնտեսականների տնտեսությունները, վորոնց ընտանիքի աշխատունակ անդամները (բոլորը, կամ գոնե մեկը) գտնվում են գյուղատնտեսական կոլտնտեսությունում (կոմմունա, արտել, հողօգտագործական ընկերություն), անկախ նրանից այդ տնտեսությունը ունի տնամերձ ցանքեր, անասուններ և այլն, թե վոչ:

Բոլոր տեսակի արհեստագործական և ձկնորսական կոոպերացիայի, հաշմանդամների կոոպերացիայի արտելների անդամների տնտեսությունները դասվում են կոոպերացված տնայնագործների շարքին և հաշվի յեն առնվում ձեվ № 2 գրքում:

Բանվորների և ծառայողների տնտեսությունները նույնպես հաշվի յեն առնվում ձեվ № 2 գրքում:

Ոժանդակ գյուղատնտեսություն ունեցող բանվորներն և ծառայողներն (անկախ նրանց տնտեսության յեկամտաբերությունից և նրանից թե այն գյուղատնտեսական հարկադրման յենթարկվում է թե վոչ), մենատնտեսների շարքում չեն դասվում:

Ձեվ № 2 գրքի մեջ գրանցվում են նաև թոշակառուների և տնտեսավորողների (վոչ կոլտնտեսության անդամների) տնտեսությունները:

Ձեվ № 3 գրքով հաշվի յեն առնվում՝ կոլտնտեսությունների, արհեստագործական, ձկնորսական կոոպերացիայի կամ հաշմանդամների կոոպերացիայի անդամ չհանդիսացող մենատնտեսները, վորոնք վարում են անհատական գյուղատնտեսություն պայմանով, վոր նրանց գլխավոր զբաղմունքն է հանդիսանում գյուղատնտեսությամբ զբաղվելը·

Չկոոպերացված տնայնագործների, արհեստավորների, վորսորդների, ձկնորսների և այդ կարգին դասվող այլ տնտեսությունները, վորոնց անդամները զբաղվում են տնայնագոր-

ծական-արհեստագործական և այլ արհեստներով և չեն հանդիսանում կոլտնտեսությունների ու արհեստագործական-կոոպերատիվ արտելների անդամներ, պայմանով վոր նրանք չունեն անհատական գյուղատնտեսություն, կամ այն կրում է օժանդակ բնույթ:

Ազատ պրոֆեսիայի անձանց (դասապատրաստողների, դերասանների, կոմպոզիտորների, նկարիչների և այլն) տնտեսությունները, ինչպես նաև պաշտամունքի սպասավորները և թված խմբերին վոչ մեկին չպատկանող տնտեսությունները:

Յեթե կոլտնտեսականների, կամ մենատնտեսների տնտեսության կազմի մեջ կան ընտանիքի մեկ կամ մի քանի անդամներ, վորոնք աշխատում են արտադրության մեջ, ապա նրանք չեն առանձնացվում, վորպես ինքնուրույն առանձին տնտեսություն. այլ հաշվի յեն առնվում կոլտնտեսականների կամ մենատնտեսների տնտեսությունում, «ընտանիքի անդամների ցուցակ» հատվածում աշխատանքի վայրի մասին նշումով:

Յեթե տվյալ ընտանիքում նրա անդամներից մեկը կամ ավելին գտնվում են կոլտնտեսությունում, իսկ ընտանիքի մնացած աշխատունակ անդամները, կամ նրանցից միայն մեկը վարում է անհատական գյուղատնտեսություն, ապա նման ընտանիքը հաշվի յե առնվում, վորպես յերկու ինքնուրույն տնտեսություն —ձեվ № 2 գրքում գրանցվում են կոլտնտեսության անդամները, № 3 գրքում—մենատնտեսները:

Տնտեսությունների գրքում գրանցվում են նաև այնպիսի տնտեսություններ, վորոնց անդամները ապրում են գյուղխորհրդի սահմաններից դուրս, բայց կապված են վերջինիս հետ՝ ունեն տուն, տնամերձ հող, վճարում են ապահովագրական և այլ վճարումներ:

Յեթե տվյալ գյուղխորհրդում կան մանկատներ, դարոթներ, խրոնիկական հիվանդների, հաշմանդամների և այլն համար հիվանդանոցներ, հանրակացարաններ նրանցում ապրող բնակչության մշտական կազմով, ապա այդ բնակչությունը հաշվի յե առնվում ձեվ № 4 ա ցուցակով, վորի վրա գրվում է՝ մանկատուն, հաշմանդամների տուն և այլն, իսկ այդ հիմնարկությունների շենքում ապրող բանվորներն ու ծառայողները գրանցվում են տնտեսությունների գրքում:



Նույնպիսի № 4 ա ձեվով հաշվի յեն առնվում հովանավորվող (патронируемые) յերեխաները, յեթե նրանք ապրում են կոլտնտեսության, գյուղխորհրդի, կամ այլ կազմակերպությունների տներում և գտնվում են վերջիններիս ժամանակավոր դաստիարակման տակ:

Առանձին ընտանիքներում ժամանակավոր դաստիարակման տակ գտնվող հովանավորվող (патронируемые) յերեխաները գրանցվում են այն տնտեսության անձնական հաշվի «ընտանիքի անդամների ցուցակ» հատվածում, վորտեղ նրանք ապրում են, «ազգակցությունը ընտանիքի գլխավորի հետ» այսինքն 3-րդ սյունակում «պատրոնատ» նշումով:

Յեթե գյուղխորհրդի տերիտորիայի վրա գտնվում է յերկաթուղագծային կայարան, բուդկաներ և այլ յերկաթուղագծային շինություններ, անտառային պահակատներ—այդ շենքում բնակվող ամբողջ բնակչությունը պետք է գրանցվի գյուղխորհրդի տնտեսական գրքերի մեջ ընդհանուր հիմունքներով:

Գյուղխորհրդի տնտեսական գրքում հաշվի յե առնվում նաև այն բնակչությունը, վորն ապրում է ՄՏԿ-ների, ՄՏ արհեստանոցների, խորհտնտեսությունների և տվյալ գյուղխորհրդի տերիտորիայի վրա գտնվող այլ կազմակերպությունների շենքերում, և հողերի վրա:

Բանվորական ավաններում և քաղաքներում ձեվ № 2 և № 3 գրքերում պետք է ցուցակագրվեն միայն այն տնտեսությունները, վորոնք յենթարկվում են գյուղատնտեսական հարկման կամ պետությանը գյուղատնտեսական մթերքների պարտադիր հանձման: Ավանային և քաղաքային խորհուրդների մնացած ամբողջ բնակչությունը տնտեսությունների գրքերում չպետք է ցուցակագրել:

Գյուղատնտեսական արտելի կանոնադրությանը փոխադրված աշխենակավայրերի գյուղատնտեսական արտելների անդամների տնտեսությունները հաշվի յեն առնվում ձեվ № ? գրքում:

Գյուղխորհրդի կողմից սպասարկվող տերիտորիայի վրա տեղավորվող և գյուղատնտեսական արտելների անդամներ չհանդիսա-

ստացող աշխատավորների տնտեսությունները հաշվի յեն առնվում ձեվ № 3 գրքում:

Գյուղխորհրդի տերիտորիայի վրա ժամանակավորապես ապրող բնակչությունը ձեվ № 2 և № 3 գրքերում հաշվի չի առնվում:

Ժամանակավորապես ապրող բնակչությանը յեն դասվում այն անձինք, վորոնք յեկել են տվյալ գյուղը ժամանակավոր (սեզոնային և այլն) աշխատանքի, յեկել են հյուր և այլն, յեթե նրանց ընտանիքը և տնտեսությունը գտնվում է այլ տեղ:

Դպրոցներում, տեխնիկումներում և կուրսերում սովորող-յեկած անձնավորությունների ցուցակագրումը կատարվում է ձեվ № 4 ա ցուցակում:

Դպրոցներում, տեխնիկումներում և կուրսերում սովորողները, վորոնք ապրում են բնակարաններում, ըստ ուսումնական հաստատության գտնման վայրի, նույնպես գրանցվում են № 4 ա ձեվի ցուցակում, վորպես տվյալ բնակավայրում ժամանակավորապես ապրողներ:

Այսպիսով տնտեսությունների գրքերում (ձեվ №2 և №3). գյուղխորհուրդի տերիտորիայի վրա ապրող և կառուցումներ, տնամերձ հողեր և ցանքեր չունեցող բանվորների ու ծառայողների ձեվ № 2 ցուցակում և գյուղխորհրդի տերիտորիայի վրա ժամանակավորապես ապրող անձանց ցուցակում ձև № 4ա պետք է հաշվի առնվի գյուղխորհրդի տերիտորիայի վրա ապրող ամբողջ բնակչությունը (ներառյալ ժամանակավորապես բացակայողներին և ժամանակավորապես ապրողներին), ինչպես մեծահասակները, նույնպես և յերեխաները, ինչպես իրենց տնատեղում (усадьба), տներում, նույնպես և վարձու բնակարաններում ապրողները:

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐՔԵՐՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ ԲԱՑ ԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

Տնտեսությունների անձնական հաշիվները բացվում են յուրաքանչյուր տարի առ 1-ը հունվարի, խիստ տերիտորյալ կարգով յուրաքանչյուր բնակավայրի սահմաններում, անձնական հարցման կարգով, տնտեսությունների համատարած շրջագայության միջոցով:

Կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների և կոո-



պերացված տնայնագործների բոլոր տնտեսությունները գրանցվում են մեկ ընդհանուր տնտեսությունների ձեվ № 2 գրքի մեջ տերիտորյալ կարգով, անկախ հասարակական խմբերից:

Մենատնտեսների, չկոոպերացված տնայնագործների և այլ տնտեսությունները գրանցվում են նույնպես մեկ ընդհանուր ձեվ № 3 գրքի մեջ, անկախ հասարակական խմբերից:

Շրջագայության ժամանակ ընտանիքի գլխավորի, կամ ընտանիքի այլ մեծահասակ անդամի հարցման կարգով անձնական հաշվի մեջ գրանցվում յեն՝ ընտանիքի գլխավորի ազգանունը, անունը, հայրանունը, հասարակական խումբը, (կոլտնտեսական, մենատնտես, բանվոր, ծառայող, կոոպերացված, չկոոպերացված տնայնագործ և այլն) տնտեսության ճիշտ հասցեն, «ընտանիքի անդամների կազմը», «կառուցումներ», «պտղատու այգիներ և հատապտղաբաններ» ու «անասունների առկայությունը» հատվածները, իսկ մենատնտեսների մոտ բացի դրանից «գյուղատնտեսական և արհեստագործական գործիքներ»:

Անասունների առկայության մասին 1/1–1940 թ. տվյալները պետք է գրանցվեն տնտեսությունների գրքի մեջ անասունների հաշվառման բլանկներից բացի հետևյալ սյունյակներից» յերինջներ, այդ թվում ծածկված մինչև 1/10, հորթեր մինչև 6 ամսական, հորթեր 6 ամսականից մինչև մեկ տարեկան, խոզեր (մատղաշներ) 4–6 ամսական, 6–9 ամսական, վոչխարների նր-կատամամբ՝ մաքիներ, շիշակներ, ընդամենը վոչխարներ և գառներ 6 ամսականից բարձր, այդ թվում կոշտբրդյա, կիսակոշտբրդյա (ըստ առանձին ցեղերի), նրբաբրդյա (ըստ առանձին ցեղերի) այծերի վերաբերյալ արու և էգ ուլեր 6 ամսականից մինչև մեկ տարեկանը, ընդամենը այծեր 6 ամսականից բարձր, այդ թվում անգորական, ձիերի վերաբերյալ՝ քուռակներ մինչև 6 ամսական:

Այդ սյունյակները պետք է լրացվեն շրջագայության ժամանակ:

Տնտեսության №-ը անձնական հաշվում մնում է նույնը, վորը տրված էր տնտեսությանը 1939 թվին:

Յեթե մեծ գյուղական խորհուրդներում շրջագայությունը կատարելու համար ներգրավվում են մի քանի անձինք, ապա յուրաքանչյուրի համար առանձնացվում է առանձին տեղամաս.

տեղամասի սահմաններն անհրաժեշտ է ճիշտ վորոշել, տնտեսությունը բաց թողնելուց կամ կրկնակի հաշվառումից խուսափելու համար:

Շրջագայության ժամանակ պետք է ուշադրությամբ պարզել, վորտեղ է գտնվում ամենամոտիկ կամ առանձնացած ազգաբնակչությունը, որինակ՝ ագարակներում (խուտոր), անտառային պահականներում և այլն: Յեթե վորևե ագարակ (խուտոր), բուդկա, պահակատուն տեղամասերի նշված սահմանների մեջ մտցված չեն լինի, անհրաժեշտ է նրանց մտցնել լրացուցիչ կարգով: Չպետք է բաց թողնված լինի վոչ մի փոքր բնակավայր, վոչ մի առանձին ընկած բնակարան:

Գյուղխորհրդի տնտեսությունների գրքերը պետք է համարակալվեն անընդհատ համարակալմամբ: Որինակ, յեթե գյուղխորհուրդն ունի № 2 ձևի հինգ գիրք № 3-ից յերկու գիրք, նրանց հարկավոր է համարակալել այսպես՝ ձև № 2 գրքերը հաջորդաբար մեկից մինչև 5-րդ համարը, ձև № 3 գրքերը 6 և 7 համարներով:

Յուրաքանչյուր գրքի յերեսին գրվում է բնակավայրի անունը: 20 տնտեսությունից ավել ունեցող յուրաքանչյուր բնակավայրի համար բաց է արվում առանձին գիրք:

Յեթե տվյալ գրքի մեջ մտցված է 2 կամ յերեք տարբեր փոքր բնակավայրեր, ապա տնտեսությունների գրքի յերեսին գրանցվում են բոլոր 2 կամ 3 անունները, յուրաքանչյուրի դիմաց նշելով, վոր եջից մինչև վոր եջն են տեղավորված տվյալ բնակավայրի տնտեսությունները, որինակ՝

1. Գյուղ Իվանովկա 1—16 եջ
2. Գյուղակ Միխայլովկա 7—31 եջ և այլն:

Իսկ գրքի մեջ Իվանովկա գյուղի առաջին տնտեսությունից առաջ անհրաժեշտ է միջադրել սպիտակ թերթ Իվանովկա գյուղի անունով. Նույնն անել և հաջորդ բնակավայրից առաջ:

Մեկ բնակավայրը վերջացնելուց հետո գրքերում պետք է փոքր քանակությամբ ազատ եջեր թողնել այդ գյուղի տնտեսությունների համար, վորոնք կարող են բաժանվել կամ նոր կազմակերպվել:

Տնտեսության անձնական հաշվի №-ը տվյալ տնտեսության համար հանդիսանում է մշտական: Տնտեսությանը տեղեկացումներ, ծանուցագրեր և այլն գրվում են այդ համարով:



Բոլոր դեպքերում, յերբ գյուղխորհրդի սկզբնական հաշվառման կամ փաստաթղթերի այս կամ այն ձևի մեջ խոսվում է տնտեսության մշտական համարի, կամ տնտեսության անձնական հաշվի համարի մասին, ինկատի յե ունեցված տնտեսության հենց այդ մշտական համարը:

Յուրաքանչյուր հասարակական խմբի համար տնտեսությունների առանձին համարակալում կատարել չի թույլատրվում:

Տնտեսությունների համարակալումը պետք է լինի անընդհատ և միասնական ամբողջ գյուղխորհուրդում:

Մեկ հասարակական խմբից մյուսը անցնելիս, տնտեսության համարը չի փոխվում:

Յեթե մենատնտեսի տնտեսությունը մտել է կոլտնտեսություն, ապա № 3 գրքում փակվում է այդ տնտեսության անձնական հաշիվը, իսկ № 2 գրքում բացվում է նոր անձնական հաշիվ տնտեսության նախկին համարով:

Բոլոր դեպքերում, յերբ տնտեսությունը դադարում է գոյություն ունենալուց (որինակ, յերբ տնտեսության բոլոր անդամները գնացել են այլ տեղ և իրենց կապը կտրել են գյուղխորհրդի հետ և այլն), կամ յերբ տնտեսությունը բաժանվել է, տնտեսության անձնական հաշիվը փակվում է: Անձնական հաշիվը փակելու մասին նշում է արվում ձև № 2 կամ № 3 գրքի մեջ, նրա փակման պատճառի բացատրությամբ:

Տնտեսությունը յերկու տնտեսությունների բաժանվելիս հին անձնական հաշիվը փակվում է և յուրաքանչյուր առանձնացված տնտեսության համար համապատասխան տնտեսությունների գրքում բացվում են առանձին անձնական հաշիվներ, ըստ վորում մեկ տնտեսությունը թողնվում է հին համարը, «բաժանվել է № . . . տնտեսությունից» նշումով, իսկ մյուսին տրվում է հերթական համար ձև № 4 ցուցակով:

Անձնական հաշիվները բաց անելուց հետո, գյուղխորհրդում կազմվում է՝

ա) այբբենական գիրք, վորի մեջ պետք է գրանցվեն՝ տնտեսատիրոջ ազգանունը, անունը և հայրանունը, գրքի համարը, անձնական հաշվի եջի համարը և տնտեսության մշտական համարը:

բ) Գյուղխորհրդի կողմից միավորվող տնտեսությունների ցուցակը, ձև № 4։

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐՔԵՐԻ ԼՐԱՑՈՒՄԸ. ՁԵՎ № 2 (ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՐՔ)։

Գյուղատնտեսությամբ զբաղված տնտեսություններում ընտանիքի գլխավոր է գրանցվում այն անձնավորությունը, վորն իրավականորեն պատասխանատու յե իր տնտեսության համար (վորի անունով դուրս են գրվում գյուղատնտեսական պլանային առաջադրանքները և այլ պարտականությունները), իսկ գյուղատնտեսությամբ չզբաղվող տնտեսությունում ընտանիքի գլխավոր է գրանցվում նա, ով հայթհայթում է գոյության հիմնական միջոցները։

«Տնտեսության № . . .» հարցում գրանցվում է տնտեսության մշտական համարը։

«Վոր կոլտնտեսության անդամ է» հարցին գրանցվում է կոլտնտեսության ձևը ըստ կանոնադրության և նրա անունը. որինակ՝ գյուղատնտեսական արտել «Պուտ Իլիչա», ձկնորսական արտել «ոխրակ» և այլն։

Պարտադիր է գրանցել կոլտնտեսության ձևը ըստ կանոնադրության։ Բանվորների և ծառայողների տնտեսությունների հաշվառման ժամանակ, այդ հարցը գծվում է։ «Ընդունվելու թվականը» (տարի, ամիս) սյունյակում գրանցվում է տնտեսության կոլտնտեսություն մտնելու թվականը։

«Ճիշտ հասցեն» սյունյակում գրանցվում է գյուղի անունը, փողոցը և տան համարը. գյուղերում, վորտեղ չկա տների համարակալում, տնվորների տնտեսության համար գրանցվում է այն տնտեսության մշտական համարը, վորի մոտ ապրում է տնվորը։

«Հասարակական խումբ» սյունյակում գրանցվում է «կոլտնտեսական», «բանվոր», «ծառայող», «կոոպերացված տնայնագործ» և այլն։

Հասարակական խումբը փոխվելիս, սյունյակի յերկրորդ տողում նշում է արվում այդ մասին, ցույց տալով փոխվելու ամսաթիվը։

«Ընտանիքի անդամների ցուցակ» № 1-ին ՀԱՏՎԱԾՈՒՄ,



ա սյունյակում գրանցվում է ընտանիքի անդամների հերթական համարները, բ սյունյակի առաջին տողում գրանցվում է ընտանիքի գլխավորի ազգանունը, անունը, և հայրանունը, իսկ հետո — ընտանիքի մնացած բոլոր անդամներինը։

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել նախորդ տարվա ծնված յերեխաների գրանցման վրա, վոչ մի տեղ ԶԱԳՍԻ որգաններում չցուցակագրված յերեխաներին գյուղխորհրդի քարտուղարը պարտավոր է ցուցակագրել։

Առաջին սյունակում ընտանիքի գլխավորի դիմաց գրվում է «գլխավոր», իսկ ընտանիքի յուրաքանչյուր անդամի դիմաց նշվում է նրա առնչությունը ընտանիքի գլխավորի հետ՝ մայրը, կինը, տղան, աղջիկը և այլն։

2-րդ սյունյակում գրանցվում է սեռը՝ «արական», «իգական»

3-րդ սյունյակում գրանցվում է ծննդյան տարին և ամիսը։

«Ազգությունը» սյունյակում գրանցվում է այն ազգությունը, վորին դասում է իրեն հարցաքննվողը։

Փոքրահասակների ազգությունը վորոշում են ծնողները։

«Գրագիտություն» սյունյակում գրել և կարդալ իմացող անձնավորություններին նշվում է «գրագետ»։ Կարդացող, բայց գրել չիմացող անձնավորություններին նշվում է «միայն կարդում է», իսկ վոչ կարդալ և վոչ էլ գրել չիմացող (վոչ մի լեզվով) անձնավորություններին գրանցվում է «անգրագետ»։

Մինչև 8 տարեկան յերեխաներին գրագիտության մասին նշում չի արվում։ Գրագիտության փոփոխությունները նշվում են հաջորդ (6-րդ) սյունյակում։

7-րդ սյունյակում՝ «ներկայումս ինչ դպրոցում է սովորում» գրանցվում է այն ուսումնական հաստատությունը, վորտեղ սովորում է ուսանողը (որինակ՝ տարրական, վոչ լրիվ միջնակարգ, միջնակարգ դպրոց, տեխնիկում, ԲՈՒՀ, կոմբայնավարների կուրսեր և այլն)։

8 և 9-րդ սյունյակներում «նշում ուսման մեջ յեղած փոփոխությունների մասին», առ 1-ը հունվարի 1941 և 1942 թ.թ. դրությամբ հարկավոր է նորից նշում անել բոլոր սովորողների համար։

10-րդ սյունյակում գրանցվում է մասնագիտությունը ինչպես գյուղատնտեսության մեջ, նույնպես և գյուղատնտեսու-

թյունից դուրս, օրինակ՝ տրակտորիստ, կոմբայնավար, ձիապան, կթող, դաշտավար, կամ փոխանորդ, ճախարակագործ, չափեր և այլն:

Եթե տվյալ անձնավորությունն ունի 2—3 մասնագիտություն, պետք է բոլորը գրանցել, անկախ այն բանից— աշխատում է նա ըստ մասնագիտության թե ոչ:

11-րդ սյունյակը, «Աշխատանքի վայրը և որպես ինչ է աշխատում» լրացվում է այսպես՝ Կրասնոդարսկի ՄՏԿ-ի կոմբայնավար, Լենինի անվան կոլտնտեսության կթող փոխանորդ «Կարմիր Հոկտեմբեր» գործարանում և այլն:

Իրենց տանը տնայնագործական արհեստագործական զբաղմունքով զբաղվող անձնավորությունների համար գրանցվում է՝ օրինակ, կոշկակար իր տան մեջ և այլն: Եթե այդ անձնավորություններն աշխատում են դուրսը (արտագնացության մեջ) պետք է գրել՝ «Թաղիքագործ արտագնացության մեջ» և այլն:

Վարձու աշխատող անձնավորությունների համար 28-րդ սյունյակում գրանցվում է— որ ամսից և տարեթվից տվյալ անձնավորությունն անընդհատ աշխատում է վարձով:

Ընտանիքի անդամներից որևէ մեկի աշխատանքի մեջ կատարված փոփոխություններն առ 1-ը հունվարի 1941 և 1942 թ. թ., նշվում են 12 և 13-րդ սյունյակներում:

14-րդ սյունյակում նշվում են հաշմանդամները և կենսաթոշակառուները մասնանշելով կատեգորիան, իսկ 15-րդ սյունյակում նշվում են այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել նրանց հետ հետագայում:

Առ 1-ը հունվարի 1940 թ. մեկ ամսից ավել բոլոր բացակայողների համար 16-րդ սյունյակում նշում է արվում բացակայության մասին, օրինակ՝ բացակայում է 5-ից հոկտեմբերի 1939 թ., իսկ 17-րդ սյունյակում անհրաժեշտ է ցույց տալ պատճառը՝ աշխատանքի արտագնացությունը, ԲԳԿԲ, ուսանում է և այլն:

Առ 1-ը հուլիսի 1940 թ. բացակայության մասին նշումը պետք է անել 18 և 19-րդ սյունյակներում. Առ 1-ը հունվարի բացակայողներին և մինչև 1-ը հուլիսի վերադարձածներին 18—19 սյունյակներում գրանցվում են «վերադարձել է»:

Տնտեսության մեջ ժամանակավոր բացակայող են համար-



վում մեկ և ավել ամսով, ժամանակավոր (սեզոնային) աշխատանքի, պայմանագրերով աշխատելու, Կարմիր բանակ, սովորելու և այլն բացակայող ընտանիքի անդամները:

Իրենց ինքնուրույն բյուջեով, տվյալ տնտեսությունից մշտապես դուրս ապրող, թեկուզ և պարբերաբար տնտեսության դրամ ուղարկող ընտանիքի անդամները տվյալ տնտեսության անդամ չեն համարվում և տնտեսությունների գրքի մեջ (թեկուզ և բացակայության մասին նշումով) չեն գրանցվում:

Տնտեսությունում մշտական ապրելու համար նոր եկած անձնավորությունները նշվում են 29-րդ սյունյակում (գալու ամսաթիվը և պատճառը), իսկ տվյալ տնտեսությունից բոլորովին հեռացած անձնավորություններին նույնպես այստեղ արվում է նշում, ցույց տալով հեռանալու ամսաթիվը և պատճառը:

20—27-րդ սյունյակները հատկացված են առ 1-ը հունվարի և 1-ը հուլիսի 1941 և 1942 թ. թ. բացակայության մասին նշումների համար:

Ծնվածների ընթացիկ գրանցումներ և մահացածներին դուրս հանելը կատարվում են տնտեսությունների գրքերում ամբողջ տարվա ընթացքում, ԶԱԳՍի գրքերում ծնունդների և մահացության դեպքերի ընթացիկ ցուցակագրման տվյալների հիման վրա, ծնվելու կամ մահացության մոմենտի առաջին իսկ օրերին:

Տնտեսությունների գրքերի լրացման և պարբերական ստուգումների ժամանակ, անհրաժեշտ է նախորդ տարվա ընթացքում յուրաքանչյուր ծնվածի, ինչպես նաև յուրաքանչյուր մահացածի նկատմամբ ճշտորեն ստուգել, ԶԱԳՍ-ի որևէ օրգանում ցուցակագրված էր արդյոք նրա ծնունդը կամ մահը:

ԶԱԳՍ-ի օրգաններում չցուցակագրված բոլոր ծնունդներն, ինչպես նաև մահացության դեպքերը պետք է ցուցակագրված լինեն ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի ՔԿԱԿԲ (ՑՈԱԳՍ) հրահանգի լրիվ համապատասխան:

Տնտեսական գրքերում, ծնվածների համար ծննդյան ամիսը և տարեթիվը գրանցվում է 3-րդ սյունյակում. և միաժամանակ մահացածների համար 29-րդ սյունյակում— մեկ տողով գրվում է «մահացել է . . . . . ամիս, տարին»:

ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ, «Հողը ցանքերը և տնկումներ» տվյալները հողի մասին լրացվում են գյուղխորհուրդում առ 1-ն հունվարի դրությամբ:

Տնտեսության հողի ընդհանուր տարածության և նրա ըստ հողատեսքերի բաշխման մասին տվյալները վերցվում են տնամերձ հողերի վերջին հաշվման նյութերից:

2-րդ հատվածում առաջին տողում գրանցվում է ամբողջ տնամերձ հողը, 2-րդ տողում, այդ թվից շենքերի տակ, 3-րդ տողում դրանից բնակելի շենքերի տակ, 4-րդ տողում բանջարանոցի, 5-րդ տողում այգու տակ, հետո 6, 7. 8 ազատ տողերը:

«Պտղատու այգիների և հատապտուղների տնկումներ» ենթահատվածը լրացվում է տնտեսությունների շրջագայության ժամանակ: Շրջհողբաժնից ցանքի պլանը ստանալուց հետո «ցանքեր և տնկումներ» հատվածում գյուղխորհուրդը գրանցում է յուրաքանչյուր տնտեսության անձնական հաշվի մեջ պլանային առաջադրանքները, 19.. . . . թ. «պլան» սյունյակում.

Տվյալները փաստացի ցանքի մասին, գյուղխորհուրդը գրանցում է տնտեսության անձնական հաշվի մեջ ցանքի յեզրափակիչ հաշվետվությունից (ձև № 17 ա).

5-ՐԴ ՀԱՏՎԱԾԸ «շերամապահություն» լրացվում է շերամապահության պլանը շրջանային գործադիր կոմիտեյի կողմից վերջնականապես կոլտնտեսականներին հիշեցնելուց հետո և այդ պլանի համաձայն Հայմետաքս տրեստի ցանցի կողմից գրենայի չափի, խնամքի, ստացվելիք բերքի քանակի ու բոժոժի արժեքի մասին կոլտնտեսականների հետ կոնտրակտացիոն պայմանագրեր կնքելուց հետո:

1-ին սյունյակում— (գրենայի բաշխումը տուփերով) գրանցվում է կոլտնտեսականին տրված պլանը տուփերով, իսկ յեթե պլանը մեկ տուփից քիչ է գրանցվում է այսպես, օրինակ 0,5 տուփ, 0,2 տուփ, 0,7 տուփ և այլն:

2-րդ սյունյակում գրանցվում է փաստացի կատարվածը— այսինքն տրված գրենայի պլանից վորքան է արթնացված: 3-րդ սյունյակում (բոժոժի մթերում կիլոգրամներով) գրանցվում է պայմանագրում նախատեսնված պլանը, իսկ 4-րդ սյունյակում՝ փաստացի ստացված բոժոժի քանակը (կիլոգրամներով):



5-րդ սյունյակում գրանցվում է նախատեսնված ստացվելիք միջին բերքը մեկ տուփից, իսկ 6-րդ սյունյակում՝ մեկ տուփից փաստացի ստացված բոժոժի միջին բերքը:

6-ՐԴ ՀԱՏՎԱԾԸ՝ «Անասուններ», լրացվում է առ 1-ն հունվարի դրությամբ, տնտեսությունների շրջագայության ժամանակ, տնտիրոջ անձնական հարցման հիման վրա: Յեթե վորևէ տնտեսություն կունենա նամեկլատուրայով չնախատեսնված անասունների տեսակներ, այդ անասունները պետք է գրանցվեն ազատ սյունյակներում: Հաջորդ ազատ սյունյակում կգրանցվեն անասունների առկայության մասին տվյալները առ 1-ն հուլիսի դրությամբ:

Կոպիտ բրդյա, կիսակոպիտբրդյա և նրբաբրդյա վոչխարները պետք է հաշվի առնվեն ըստ յուրաքանչյուր ցեղի առանձին:

Միջին Ասիայի, Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի հանրապետություններում, մարզերում և յերկրներում պետք է հաշվի առնել իրենց մոտ յեղած անասունների տեղական տեսակները:

Անասունների առկայության մասին առ 1-ն հունվարի 1940 թվի տվյալները պետք է գրանցվեն տնտեսությունների գրքերի մեջ անասունների հաշվառման բլանկներից բացի հետևյալ սյունյակներից՝ յերինջներ, այդ թվում ծածկված մինչև 1-ը 10-րդ ամսի, հորթեր մինչև 6 ամսական, հորթեր 6 ամսականից մինչև մեկ տարեկան, խոզեր (մատղաշներ) 4—6 ամսական, 6—9 ամսական. վոչխարների նկատմամբ՝ մաքիներ, շիշակներ, ընդամենը վոչխարներ և գառներ 6 ամսականից բարձր, այդ թվում կոշտաբրդյա, կիսակոշտաբրդյա (ըստ առանձին ցեղերի), նրբաբրդյա, (ըստ առանձին ցեղերի). այծերի վերաբերյալ արու և եգ 6 ամսականից բարձր, այդ թվում՝ անգորական. ձիերի վերաբերյալ՝ քուռակներ մինչև 6 ամսական:

Այդ սյունյակները պետք է լրացվեն շրջագայության ժամանակ:

Մատղաշների աճեցման պլանը գյուղխորհուրդը գրանցում է տնտեսության անձնական հաշվի մեջ 7-րդ հատվածում գյուղխորհուրդի հաշվառման ձև Նո–19ա ցուցակից, շրջհողբաժնից

ընդհանուր պլանը սահմանելուց հետո, իսկ փաստացի կատարումը նշվում է նույն թվի առ 31 դեկտեմբեր ամսի դրությամբ, անասունների հաշվառման ժամանակ:

8-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ գրանցվում են առաջադրանքներն օրինակ՝ «աճեցնել հորթ, գառներ» և այլն և առաջին սյունյակում՝ «պլան», գրանցել պլանային քանակությունը:

9-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ՝ «Շենքեր», տնտեսությունները շրջագայելու ժամանակ գրանցվում է տնտեսությանը պատկանող յուրաքանչյուր շինության անունը: Մինչև 1918 թիվը կառուցված շինությունների դիմաց նշվում է «մինչև 1918 թիվը», իսկ ավելի ուշ կառուցվածների դիմաց գրանցվում է կառուցման տարին:

Այդ հատվածի 2-րդ սյունյակում «նշում վարձակալության մասին» այն ընտանիքների անձնական հաշիվների մեջ, վորոնք ապրում են գյուղխորհրդի, կամ այլ հիմնարկությունների ու կազմակերպությունների տներում, վորոնք տրված են նրանց վարձակալության, կամ օգտվելու այլ հիմունքներով, նշում է արվում «վարձակալություն»:

Ձկնորսական կոլտնտեսությունների և արդ. կոլտնտեսությունների տնտեսություններում, վորտեղ ճանապարհային շինարարություններում ունենալիք աշխատանակցության առաջադրանքները տրվում են վոչ թե ամբողջ կոլտնտեսությանը, այլ նրա առանձին անդամներին, աշխատանակցության հաշվառման համար գյուղխորհուրդը կարող է օգտագործել «ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» հատվածը:

Անձնական հաշվի վերջում տնատերը ստորագրում է, տնտեսությունների շրջագայության ժամանակ, տարեկան յերկու անգամ՝ առ 1-ն հունվարի և 1-ը հուլիսի, նշելով ամսաթիվը:

ՁԵՎ Նո-3 (ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՐՔ):

Տնտեսությունների գրքի ձև Նո-3ում հատվածների և պարագրաֆների մեծամասնությունն ըստ բովանդակության համապատասխանում են տնտեսությունների գրքի ձև № 2-ի հատվածներին և սյունյակներին և լրացվում են ձև № 2-ի ցուցումների համաձայն (տես ձև № 2 գրքի լրացման ցուցումները):



Ձև № 3 գրքի հարցերի մասում, «գոյության հիմնական աղբյուրը» հարցին պետք է տրված լինի սպառիչ պատասխան, օրինակ՝ «գյուղատնտեսություն», «սայլորդություն», «ձկնորսություն», «վորսորդություն» և այլն:

Յեթե տնտեսությունը չունի դաշտային ցանք և միևնույն ժամանակ ընտանիքի աշխատունակ անդամներից վոչ վոք չի աշխատում վարձու աշխատանքով, չի զբաղվում տնայնագործական արհեստով, այլ ապրում է կովի, բանջարանոցի, պտղատու, խաղողի այգու, ազնվամորենու, մեղվանոցի և այլնի յեկամուտով, հարկավոր է գրանցել «յեկամուտ կովից», «յեկամուտ բանջարանոցից» և այլն:

«Գյուղատնտեսական արհեստագործական ինվենտար» հատվածում գրանցվում են գյուղատնտեսական և արհեստագործական հիմնական ինվենտարը (ձկնորսական, վորսորդական և այլն):

«Տնտեսության հողը» հատվածը լրացվում է յուրաքանչյուր տնտեսությանը հող հատկացնելու մասին գյուղխորհրդի փաստաթղթային տվյալներով. ճշտելու համար անց է կացվում տնատիրոջ հարցում կամ յեթե կպահանջվի, նրա հողամասի չափում:

«Ցանքեր և տնկումներ» ու «անասուններ» հատվածները լրացվում են ձև № 2 գրքի համապատասխան հատվածները լրացնելու ցուցումներին համաձայն:

«Աշխատանքային մասնակցությունը ճանապարհաշինության» հատվածը լրացվում է այսպես՝ «հարկավոր է աշխատել» սյունյակում գյուղխորհուրդը հաշվարկում է մարդ-օրերի և ձի-օրերի քանակությունը, վորը տվյալ տնտեսությունը պետք է աշխատի: Հաջորդ ազատ սյունյակը նախատեսնում է հնարավոր փոփոխությունները տնտեսության առաջադրանքների մեջ (յեկել է ընտանիքի նոր աշխատունակ անդամ, կամ ընդհակառակը— գնացել է կամ զրկվել աշխատունակությունից ընտանիքի անդամը, վորին տրված է յեղել առաջադրանք):

«Փաստորեն աշխատել է» սյունյակում, առաջին տողում գրանցվում է ամիսը և ամսաթիվը, յերբ տվյալ տնտեսությունն աշխատել է, իսկ յերկրորդ, յերրորդ և չորրորդ սյունյակներում— աշխատած օրերի թիվը:

Տեղեկություններ փաստացի աշխատած օրերի մասին գր-

լանցվում են այդ հատվածում աշխատանքների ընկավարի տաբելի հիման վրա, վորը նա պարտավոր է յուրաքանչյուր վերջորյակ ուղարկել գյուղխորհրդին:

9-րդ հատվածը՝ «Ծերամապահություն» լրացվում է նույն կարգով, ինչ վոր տնտեսական գիրք ձև № 2-ի 5-րդ հատվածը:

## ՁԵՎ №–4 (ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՎՈՐՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ)

Ձեվ № 4 ցուցակը լրացվում է այսպես՝ տնտեսությունները հրջագայելուց հետո, յուրաքանչյուր բնակավայրի և յուրաքանչյուր հասարակական խմբի սահմաններում կազմվում է առանձին ցուցակ, տնտեսությունների գրքերի գրանցումների հիման վրա: 1-ին սյունյակում դնում է հաջորդական անընդհատ համարակալումն, ըստ ամբողջ հասարակական խմբի: 2-րդ սյունյակում գրանցվում է տնտեսության գլխավորի ազգանունը, անունը և հայրանունը, 3-րդ սյունյակում տնտեսության մշտական համարը: 4-րդ սյունյակում տարվա ընթացքում նշում է արվում հասարակական խմբի փոփոխման մասին, իսկ 5-րդ սյունյակում նշում՝ տնտեսության լուծարքի մասին: Յուրաքանչյուր բնակավայրի առաջին տնտեսությունից առաջ գրանցվում է տվյալ բնակավայրի անունը:

Տնտեսությունների հասարակական խումբը գրանցվում է № 4 ձևի ցուցակի հացեյի մասում:

Հասարակական խումբը փոխվելիս, տնտեսությունը ջնջվում է այն ցուցակում, վորտեղ նա գրանցված եր, դուրս անելու պատճառի նշումով և գրանցվում է այն հասարակական խմբի ձև № 4 ցուցակում, վորտեղ նա անցել է:

Նախորդ սյունյակների լրացման հետ միաժամանակ լրացվում են և 6—11-րդ սյունյակները: 6—11 սյունյակները չեն լրացվում ամբողջ կազմով բացակայող տնտեսությունների համար: 6-րդ սյունյակում գրանցվում են ընտանիքի բոլոր անդամներն, ինչպես առկա, նույնպես և բացակայողները:

7, 8, 9-րդ սյունյակներում գրանցվում են միայն ընտանիքի յերկու սեռի առկա անդամները՝ տղամարդ, կին:

10-րդ սյունյակում գրանցվում են այն անձնավորությունները, տղամարդիկ և կանայք, վորոնք բացակայում են 1939



թվի հուլիսի 1-ից, կամ ավելի ուշ ժամանակվանից, իսկ 11-րդ սյունյակում գրանցվում են բոլոր հուլիսի 1-ից չուտ գնացածները:

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՊՐՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ.— ՁԵՎ №–4–ա (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՊՐՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿԸ)

Ցուցակ № 4–ա ձևը սկսվում է առ 1-ն հունվարի, առանց բացառության բոլոր գյուղական խորհուրդներում:

Պասպորտիզացիայի չյենթարկված գյուղխորհուրդներում ամբողջ տարվա ընթացքում այդ ցուցակի մեջ է գրանցվում տվյալ գյուղխորհուրդը ժամանակավորապես՝ մեկ ամիս և ավել ժամանակաշրջանով յեկած յուրաքանչյուր անձնավորություն:

Գրանցումը պետք է կատարվի գալու մոմենտից հետո 3 որվա ընթացքում:

Յեթե ժամանակավորապես ապրողը յեկել է մեկ ամսից պակաս ժամանակով, նրան № 4–ա ցուցակի մեջ չեն մտցնում: Իսկ յեթե մեկ ամիսը լրանալուց հետո կպարզվի, վոր նա յերկարացրել է իր մնալու ժամանակամիջոցը տվյալ գյուղխորհրդում, նրան անհրաժեշտ է գրանցել № 4–ա ցուցակի մեջ:

Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել այն բանի վրա, վոր № 4–ա ցուցակի մեջ առանձին տողով գրանցվի յուրաքանչյուր ժամանակավորապես յեկած անձնավորությունն, ընտանիքի յուրաքանչյուր անդամն, այլ վոչ թե միայն ընտանիքի գլխավորը:

Յեթե ժամանակավորապես ապրողը խզել է կապերը իր նախկին բնակավայրի հետ և չունի այնտեղ վոչ ընտանիք, վոչ տնտեսություն և մնացել է այստեղ մշտապես բնակվելու, ապա նա գրանցվում է համապատասխան տնտեսությունների գրքի մեջ:

Պասպորտիզացիայի յենթարկված գյուղխորհուրդներում, գյուղխորհրդի քարտուղարը տարեկան մեկ անգամ, հարկադրման օբյեկտների հաշվառումից առաջ պարտավոր է ստուգել ժամանակավորապես ապրող բնակչության ցուցակները:

Ձեվ № 4–ա ցուցակի 3-րդ սյունյակում՝ «զբաղմունքը և

աշխատանքի վայրը», նշում է տրվում տվյալ անձնավորության զբաղմունքի տեսակի մասին (տվյալ գյուղխորհուրդ գալուց հետո), նույնը վերաբերվում է և «աշխատանքի վայր»-ին: Յեթե ժամանակավորապես ապրողը յեկել է վոչ թե սեզոնային աշխատանքի, այլ յերկարատև գործուղման, ապա 3-րդ սյունյակում գրանցվում է «գործուղում» և ինչ գործով: Հանգստանալու, հյուր և այլն յեկած անձնավորությունների համար— 3-րդ սյունյակում գրանցվում է զբաղմունքը (ուսանող, դասատու, ծառայող, բանվոր և այլն) և գալու պատճառը:

5-րդ սյունյակում՝ «վորտեղից է յեկել» հարկավոր է գրել, օրինակ՝ «Քաղաք Կուրսկ», «Պետրովսկի շրջանի, . . . մարզի Իվանով գյուղ»:

Նշումներն անասունների առկայության մասին տրվում են տիրոջ ազգանունի դիմաց անասունների հաշվառման մոմենտի դրությամբ:

7-րդ սյունյակում գրանցվում է այն տնտեսության համարը, վորի մոտ տվյալ անձնավորությունը բնակվում է:

Նույնպես ձև № 4-ա ցուցակի մեջ են գրանցվում խրոնիկների հիվանդանոցներում բուժման համար գտնվող անձնավորությունները, մանկական գաղութների և մանկատների սաները, հաշմանդամների տներում, հանրակացարաններում և այլն ապրողները: Այդ դեպքում ցուցակի վրա գրանցվում է տվյալ հիմնարկության անունը և նրա հասցեն, իսկ «ժամանակավորապես ապրող» բառերը գծվում են:

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ.—

Բոլոր ծնունդների և մահացության դեպքերի ընթացիկ հաշվառումը կատարվում է ծնվելու կամ մահանալու մոմենտի առաջին իսկ օրերին: Ծնունդները, կամ մահացությունը և ամուսնությունը ցուցակագրվում են գյուղխորհրդում քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրքերում (ԶԱԳՍ), ըստ ՆԳԺԿ-ի հրահանգների, վորոնք տեղավորված են այդ գրքերի շապիկների վրա, կամ հատուկ ուղարկված են գյուղխորհուրդին: Յուրաքանչյուր տնտեսության բնակչության կազմի բոլոր ցուցակագրված փոփոխությունների դեպքերը, գյուղխորհրդի քարտուղարն անմիջապես փոխանցում է տնտեսության անձնական հաշվի մեջ (ձև № № 2 և 3 գրքերի) «ընտանիքի անդամների ցուցակ» հատվածում, կամ ժամանակավորապես ապրողների ցուցակում:



Շրջանային կենտրոնի տերիտորիան սպասարկող գյուղական խորհուրդներում, վորտեղ ԶԱԳՍ-ը գտնվում է վոչ թե գյուղխորհրդում, այլ ՆԳԺԿ-ի շրջանային վարչությունում, գյուղխորհրդի քարտուղարը ամսվա վերջում պետք է ԶԱԳՍ-ի գրքերից ըստ տնտեսությունների գրքերի տնտեսությունների անձնական հաշիվների մեջ գրանցի սկզբում բոլոր նորածիններին, և ապա բոլոր մահացածների դիմաց նշումներ անի մահվան մասին, իսկ հետո մտցնի բոլոր փոփոխությունները, վորոնք առաջացրել են ամուսնությունները և ամուսնալուծությունները:

Յեթե ընտանիքի անդամներից մեկն ամուսնացել է, ապա նրա կինը գրանցվում է ընտանիքի անդամների թվի մեջ, իսկ այն ընտանիքում, վորտեղ նա մինչև այժմ հաշվել է, նշում պետք է արվի նրա գնալու մասին: Յեթե նա առաջ բնակվում էր այդ նույն գյուղխորհրդում, ապա քարտուղարը գրանցում է նրան ընտանիքի անդամների ցուցակի մեջ և նշում է անում գալու մասին «ամուսնացել, է յեկել է նույն գյուղխորհուրդից»:

Իսկ յեթե նա յեկել է այլ գյուղխորհրդից, ապա «նշում գալու մասին», սյունյակում նշվում է «ամուսնացել, յեկել է ուրիշ գյուղխորհրդից»:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրքերում (ձև № № 5, 6, 7, 8, 10, 11, 12 13 14) գյուղխորհուրդն անց է կացնում ցուցակագրում, վկայական է տալիս բնակչությանը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին: Քաղաքացիական կացության ակտերը գրվում են յերկու օրինակով:

Յուրաքանչյուր ամսի 30-ին կամ 31-ին, տվյալ ամսում ցուցակագրված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների յերկրորդ օրինակների հաշվառման ճանապարհով, գյուղխորհուրդը կազմում է ակտերի գրանցումների յերկրորդ օրինակների ցուցակագրում գյուղխորհրդի հաշվետվության № 30 ձևով, վորը գրանցումների յերկրորդ օրինակների հետ միասին, վոչ ուշ քան յուրաքանչյուր ամսի 2-ին ուղարկվում է ՆԳԺԿ-ի շրջանային վարչությանը (ԶԱԳՍ-ի բաժանմունք):

*Բացի տնտեսությունների գրքերի մի շարք հատվածներից, գյուղատնտեսության հաշվառման փաստաթղթեր են հանդիսանում հետևյալ ձևերը՝*

*Ձև № 17 ա— Ցեղրավակիչ հաշվետվություն կոլտնտեսականների, մենատնտեսների, բանվորների և ծառայողների տնտեսություններում ընթացիկ տարվա բերքի տակ կատարված ցանքի հանրագումարների մասին:*

*Ձև № 18—Գյուղատնտեսական կամպանիաների ընթացքի հաշվառման մատյան:*

*Ձև № 19—Ձիաների անցագրերի գրանցման գիրք:*

*Ձև № 19–ա—Կոլտնտեսային տնտեսությունների ցուցակ, տնասնապահության զարգացման և հորթերի կոնտրակտացիայի պետական պլանի իջեցման մասին:*

*№ 17–ա ձևով անց է կացվում կոլտնտեսությունների, մենատնտեսների, բանվորների և ծառայողների, կոոպերացված տնայնագործների, ինչպես նաև այլ բնակչության բոլոր տնտեսությունների ցանքերի տարածությունների հաշվառում:*

*№ 17–ա—ում ցանքի տարածության չափերի մասին գրանցումները կատարվում են տնատերերի հարցման հիման վրա և ցանքերը տեղում անպայմանորեն դիտելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև չափման ճանապարհով: Անպայմանորեն արգելվում է փաստացի ցանված տարածության փոխարեն № 17–ա ձևի մեջ գրանցել ցանքի պլանային տվյալները, բացի ստորև նշված դեպքից:*

*Ցանքերի հաշվառումը պետք է սկսվի գարնանացան կուլտուրաների ցանքն ավարտելուց անմիջապես հետո: Առանձին դեպքերում երբ վորևէ ուշ ցանվող կուլտուրայի ցանքը լրիվ ավարտված չի լինի և սահմանված ժամկետները չեն կարող պահպանվել, մարզային, երկրային և հանրապետական ԺՏՀՎ–ները կարող են թույլատրել սկսել հաշվառումն այն հաշվով, վոր այդ կուլտուրայի տարածությունը նախնական կերպով մտցվի ըստ տնտեսություններում եղած ցանքի պլանների, հաշվի առնելով ցանքերի ապահովվածությունը նախապատրաստված հողերով և անհրաժեշտ քանակության սերմացուով, այդ կուլտուրայի ցանքն ավարտելուց հետո յենթաշրջանային*



*տեսուչը ստուգում է ցանված տարածությունների փաստացի չափերը (ստացված ճշտումները մտցվում են վերջնական հանրագումարների մեջ):*

*Փաստացի ցանքերի մասին տվյալները № 17–ա ձևի հաշվետվությունից գրանցվում են կոլտնտեսականների, մենատնտեսների, բանվորների, ծառայողների, կոոպերացված տնայնագործների և այլ բնակչության տնտեսությունների գրքերի անձնական հաշիվների մեջ:*

*Ձև № 18 գյուղատնտեսական կամպանիաների ընթացքի հաշվառման մատյանը հանդիսանում է կոլտնտեսությունների կողմից գյուղխորհուրդների միջոցով շրջհողբաժնին ուղարկվող կոլտնտեսությունների հաշվետվությունների պատճեն:*

*Ձև № 19 — Ձիերի անցագրերի գրանցման գիրքը տարվում է յուրաքանչյուր գյուղխորհրդում:*

*ՄՏԿ–ներին, խորհտնտեսություններին և գյուղխորհրդին չամրացված այլ կազմակերպություններին պատկանող ձիերին տրված անցագրերը ցուցակագրվում են շրջհողբաժնի և ԲԳ միլիցիայի գրքերում:*

*Կոլտնտեսությունների, մենատնտեսների և գյուղխորհրդին ամրացված զանազան հիմնարկությունների (դպրոցներ, առողջապահական կետեր և այլն) ձիաների գլխաքանակի պասպորտիզացիան անցկացնելիս, անցագրային կետերը ցուցակագրում էին այդ գրքերում ձիերին տրվող բոլոր անցագրերը և ձիու տիրոջից ստորագրություն էին վերցնում պասպորտը ստանալու մասին:*

*Պասպորտիզացիան ավարտելուց հետո ձիաների անցագրերի ցուցակագրման գրքերը հանձնվել են համապատասխան գյուղխորհրդներին, վորոնք հետագայում ցուցակագրում են այդ գրքերում կոլտնտեսությունների, մենատնտեսների և այլ տնտեսությունների նոր ձիաների բոլոր անցագրերը: Դրա հետ միասին գյուղխորհուրդները նշված գրքերում նույնպես ցուցակագրում են իրենց կողմից քուռակներին տրվող անցագրերը:*

*Ձիու մասին տեղեկությունները, անցագրի №–ը և անցագիրը տալու ժամանակը գրանցվում են անցագրում նշված տվյալների հիման վրա:*

*Անցագիրն ստանալիս ձիու տերը ստորագրում է «ձիու տի–*

րոջ ստորագրությունը պարտադիր ստանալու մասին» սյունակում:

«Ուր և երբ է գնացել» սյունակը լրացվում է ձին նոր տիրոջ անցնելու, սատկելու, կորչելու և այլնի ժամանակ, պատճառների նշումով:

Յեթե ձին անցել է նույն գյուղխորհրդում ապրող նոր տիրոջ, օրինակ ձին հանձնված է կոլտնտեսությանը տնտեսությունը կոլտնտեսությունը մտնելու հետևանքով, կամ վաճառված է նույն գյուղխորհրդի սահմաններում, այդ դեպքում հին տիրոջ մասին գրանցման մեջ նշում է արվում՝ «վաճառված է» հանձնված է այս ինչին», նոր տիրոջ ցուցակագրման հերթական համարի մեջ բերումով. հերթական ազատ տողում արվում է յերկրորդ գրանցումը նույն ձիու մասին, նոր տիրոջ նշումով:

Ձև № 19–ա «Կոլտնտեսային տնտեսությունների ցուցակ անասնապահության զարգացման և հորթերի կոնտրակտացիայի պետական պլանի իջեցման մասին»:

Ստանալով շրջհողբաժնից բոլոր կոլտնտեսային տնտեսությունների մատղաշների աճեցման ընդհանուր պլանը, գյուղխորհուրդը բաշխում է այն ըստ առանձին տնտեսությունների, օգտվելով շրջհողբաժնի ցուցմունքներից և տնտեսությունների գրքի «անասուններ» հատվածի անասունների առկայության մասին տեղեկություններից:

Անասնապահության առաջադրանքները № 19–ա ցուցակից անց են կացվում կոլտնտեսականների անձնական հաշիվների մեջ:

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՇԽ. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՑ ԿԱՑՎՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ:

Բնակչության աշխատանքային մասնակցության կարգով անց կացվող ճանապարհային շինարարության հաշվառման համար, բացի ձև № 3 տնտեսությունների գրքերից, գյուղխորհուրդում տարվում են հետևյալ փաստաթղթերը՝ ծանուցագիր ճանապարհային շինարարությունում աշխ. մասնակցության մասին (ձև № 46) և ճանապարհային շինարարության ղեկավարի տաբել (ձև № 47):

Ձև № 3 տնտեսությունների գրքում, յուրաքանչյուր տնտեսության անձնական հաշվի հատվածում հաշվի յե առնվում,



թե այդ տնտեսությունը, վորքան պետք է աշխատեր ճանապարհային շինարարության վրա աշխամասնակցության կարգով և ինչպես է կատարել նա այդ պարտավորությունը:

Ճանապարհային շինարարության աշխատանքների հաշվառման կարգը հետևյալն է՝

Ղեկավարվելով բնակչության աշխատանքային մասնակցությամբ կատարվող ճանապարհային աշխատանքների վերաբերյալ գործող օրենսդրությամբ, շրջճանբաժինը գյուղխորհրդի նյութերով սահմանում է, թե յուրաքանչյուր տնտեսություն տարվա ընթացքում քանի մարդօր, ձիուօր, տրակտոր—և այլն օր պետք աշխատի: Աշխատանքի նորման սահմանված է կոլտնտեսության և մենատնտեսների տնտեսությունների յուրաքանչյուր աշխատունակ անդամի, 18–45 տարեկան հասակի տղամարդկանց և 18–40 տարեկան հասակի կանանց համար 6 մարդօր: Ձիաօրերի աշխատանքի նորման սահմանված է կոլտնտեսությունների և մենատնտեսների յուրաքանչյուր բանող ձիու համար 6 ձիաօր: Ճանապարհային աշխատանքներին ներգրավվող անդամների թիվը տնտեսությունում սահմանվում է կոլտնտեսությունների համար ամբողջությամբ և մենատնտես տնտեսությունների համար, տնտեսությունների գրքերի 1–ին հատվածից: Բանող անասունների քանակությունը սահմանվում է կոլտնտեսությունների համար ամբողջությամբ № 1 ձևի «անասուններ» հատվածից: Մենատնտես տնտեսությունների համար № 3 գրքի «անասուններ» հատվածից:

Մարդօրերի և ձիաօրերի քանակությունը, վորը պետք է աշխատի յուրաքանչյուր տնտեսություն, գյուղխորհուրդը գրանցում է տնտեսության անձնական հաշվի մեջ:

Յեթե ամբողջ տնտեսությունը, կամ նրա առանձին անդամները շրջ. գործկոմի վորոշմամբ ազատված են անձնական մասնակցությունից ճանապարհային շինարարության մեջ, ապա բնականում մասնակցության փոխարեն կատարված դրամական մուծումները գրանցվում են տնտեսության անձնական հաշվի նույն հատվածի հաջորդ տողում:

Ճանապարհային շինարարության աշխատանքներ կատարելու համար, յուրաքանչյուր տնտեսության առաջադրանքը գյուղխորհուրդը տալիս է ձև № 46 ծանուցագրով: Մենատնտեսների

համար, ծանուցագիրը դուրս է գրվում տնտեսության (ընտանիքի) գլխավորի անունով և նրա մեջ գրանցվում է այդ տնտեսության բոլոր անդամների աշխատանքի մարդորերի ընդհանուր քանակությունը։ Բացի տնատիրոջ ազգանունից, անունից և հայրանունից, ծանուցագրի մեջ «տնտեսության №» բառերի կողքին ցույց է տրվում տնտեսության մշտական համարը (ըստ գյուղխորհրդի ցուցակի)։

Ծանուցագրում պետք է նշված լինի՝ վոր ժամանակաշրջանում պետք է կատարվեն աշխատանքները (որինակ մարտի 1-ից մինչև 6-ը, և ինչպիսի աշխատանքներ. որինակ՝ «քարհանքներից 2 խորանարդ մետր քար տեղափոխել Իվանովկի ճանապարհի վրա» կամ «Իվանովկի ճանապարհի վրա 15 գծային մետր տարածությամբ առու փորել» և այլն։

Ծանուցագրում նշվում է՝ քաղաքացին պետք է ներկայանա վոտքով թե ձիով, սայլով, ինչ ժամանակ, ամսի քանիսին, աշխատանքի համար ինչ պետք է բերի իր հետ (բահ, լինգ, կացին, քլունգ, սղոց և այլն։ Ո՞ւր պետք է ներկայանա (որինակ «գյուղխորհրդին» և այլն)։ Քանի մարդոր ձիավոր, իսկ կոլտնտեսության համար, բացի դրանից նաև քանի տրակտոր որ և ավտոոր պետք է աշխատել։ Կոլտնտեսության ծանուցագիրը դուրս է գրում շրջանբաժինը։ Այն դեպքերում, յերբ կոլտնտեսության համար դուրս գրվող ծանուցագրում հնարավոր չի լինում թվել աշխատանքների բոլոր տեսակները, խորհուրդ է տրվում ծանուցագրին կցել պլան—կարգադիր (նայրադ)։

Ծանուցագիրը ստանալու մասին տնատերը ստորագրություն է տալիս հատուկ ցուցակում։

Ճանապարհային աշխատանքները կատարելու ներկայանալիս, յուրաքանչյուր քաղաքացի իր ծանուցագիրը ներկայացնում է աշխատանքների ղեկավարին։ Աշխատանքը վերջանալուց հետո, աշխատանքների ղեկավարը ծանուցագրի հակառակ յերեսին նշումներ է անում կատարված աշխատանքի մասին։

Յեթե աշխատանքը կատարվում է մի քանի որվա ընթացքում, ապա աշխատանքների ղեկավարը (բրիգադիրը) ամեն որ նշում է անում այդ մասին վեց տողերից մեկում (№ 46 ծանուցագրի վրա), նշելով, վոր ամսին և որը և քանի մարդորի կամ ձիաորի աշխատանք է ընդունված (որինակ «2 մարդորի,



2 ձիաորվա»)։ Յուրաքանչյուր տնտեսության բոլոր մարդորերը, ձիաորերը լրիվ աշխատելուց հետո, գյուղխորհուրդը ծանուցագրի վերջում իր ստորագրությամբ և կնիքով հաստատում է աշխմանակցության պարտավորությունների կատարումը։ Աշխատած մարդորերի քանակությունը վորոշվում է որեկան կատարված նորմաների քանակությամբ, այլ վոչ որացուցային որերի քանակությամբ։

Այսպիսով յեթե աշխմանակցության ներգրավվածը որեկան նորմաները կատարում է 200%-ով և այդ պատճառով նրա աշխատանքը տևում է միայն 3 որացուցային որ, ապա ծանուցագրի հակառակ յերեսին (ձև № 46) գրանցվում է 6 որ։

Ծանուցագիրը մնում է տնտեսությունում, իսկ աշխատանքի ղեկավարի և գյուղխորհրդի նշումները ծանուցագրի վրա, ծառայում են տնտեսության համար, վորպես հավաստիացնող փաստաթուղթ, վոր աշխմանակցության կարգով աշխատանքը ճանապարհային շինարարության մեջ տնտեսության կողմից կատարված է։

№ 47 ձևում «աշխատանքի ղեկավարի տաբել» աշխատանքների ղեկավարը հաշվի յե առնում կատարած աշխատանքը։ Այդ տաբելը հանձնվում է գյուղխորհուրդ և ծառայում է, վորպես ճանապարհային աշխատանքների ղեկավարի հաշվետվություն, գյուղխորհրդի առաջ։ Այդ նույն տաբելից գյուղխորհուրդը նշումներից գրանցումներ է կատարում անձնական հաշիվների մեջ յուրաքանչյուր տնտեսության կատարած աշխատանքի քանակության մասին։

1) Նյութերի մթերման և արտահանման, 2) վերանորոգման աշխատանքների և 3) նոր ճանապարհների շինարարության հաշվառման համար տարվում են առանձին տաբելներ։ Խառնել այդ աշխատանքները մի տաբելում չի կարելի։ Թվարկված յերեք աշխատանքներից հատկապես վորն է հաշվի առնվում տաբելում նշվում է տաբելի յերեսին վերևի ձախ մասում, «ինչպիսի աշխատանք է» տողում։ Յեթե գյուղխորհրդում տարբեր նշանակություն ունեցող ճանապարհների ճանապարհային աշխատանքներ են տարվում, ապա վերանորոգման աշխատանքների և նոր ճանապարհների շինարարության համար պետք է տանել առանձին տաբելներ՝ 1) տեղական նշանակություն ունեցող

ճանապարհների աշխատանքների և 2) պետական նշանակություն ունեցող ճանապարհի աշխատանքների համար:

Այդ մասին նշում է արվում «ճանապարհի կամ կամուրջի նշանակությունը կամ տիպը» տողում:

Տաբելի 2-րդ սյունյակում լրիվ գրանցվում է աշխատանքի ներկայացված կոլտնտեսության անունը կամ քաղաքացու ազգանունը, անունը և հայրանունը: 3-րդ սյունակում նշվում է ծանուցագրի №-ը, 4-րդ սյունյակում—տնտեսության մշտական համարը:

6, 7, 8, 9, 10 և 11-րդ սյունյակների վերևում գրանցվում են այն ամսաթվերը, երբ կատարվել են աշխատանքները:

Ներքևում, այդ նույն սյունյակներում գրանցվում է թե տվյալ անձնավորությունը կամ կոլտնտեսությունը տվյալ օրվա ընթացքում քանի մարդօր, ձիօր, տրակտորաօր կամ ավտոօր է աշխատել:

Տաբելի հակառակ երեսին «ընդամենը աշխատում է» հատվածում ամեն օր հաշվի է առնվում—յուրաքանչյուր օր ընդամենը քանի մարդօր, ձիաօր, տրակտորաօր և ավտոօր է աշխատած:

Օրվա կատարած աշխատանքների քանակությունն ամեն օր նշվում է տվյալ օրվա սյունյակում «ինչ աշխատանքներ են կատարված» հատվածում, բրիգադիրի չափումների հիման վրա:

Վեց օր անցնելուց հետո, աշխատանքների ղեկավարը տալիս է յուրաքանչյուր տողի հանրագումարները և տաբելի 12-րդ սյունյակում գրանցում թե վեցօրյակի ընթացքում յուրաքանչյուր տնտեսություն քանի մարդօր, ձիաօր, տրակտորաօր և ավտոօր է աշխատել: Ճիշտ այդպես «ինչ աշխատանքներ են կատարված» հատվածի տողերով հաշվվում է, թե վեցօրյակի ընթացքում աշխատանքի յուրաքանչյուր տեսակից որքան է կատարված: Դրանից հետո աշխատանքների ղեկավարը ստորագրում է մենատնտեսների աշխատանքի հաշվառման տաբելը, և հանձնում է այն գյուղխորհուրդը:

Ստանալով աշխատանքների ղեկավարներից տաբելներ, գյուղխորհուրդն աշխատած մարդօրերի, ձիաօրերի մասին տեղեկությունները անցկացնում յուրաքանչյուր մենատնտես տնտեսության անձնական հաշվի մեջ:



Կոլտնտեսությունների աշխատանքի հաշվառման տաբելը աշխատանքների ղեկավարը տալիս է գյուղխորհրդին ամիսը մեկ անգամ, ըստ յուրաքանչյուր կոլտնտեսության առանձին տողով:

Տարվա սկզբին, շրջանբաժնի կողմից կոլտնտեսություններին ճանապարհային շինարարությունում աշխատանակցության պլանը իջեցնելուց հետո, առաջին տաբելում գրանցվում են կոլտնտեսությունների պլանային առաջադրանքները, իսկ հետևյալ 12 տաբելներում նշվում են նրանց փաստացի կատարման տվյալները:

## ԿԱԶՄ–ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.—

Գյուղխորհրդում տարվում է արձանագրությունների միատեսակ գիրք (ձև № 50):

Այդ գրքում պարունակվում են գյուղխորհրդին անհրաժեշտ բոլոր տվյալները, շրջգործկոմի առաջ իր կազմակերպչական աշխատանքի մասին հաշվետվությունը կազմելու համար (գյուղխորհուրդների հաշվետվություն ձև № 1):

Գրքի երրորդ մասը հատկացվում է արձանագրությունները գրանցելու համար: Գրքում բերված է օրինակ, որի համապատասխան պետք է կազմել արձանագրությունը:

Արձանագրությունների գրքում կազմվում են գյուղխորհրդի, նրա բոլոր սեկցիաների, վերստուգիչ հանձնաժողովների և գյուղխորհրդի կողմից հրավիրվող բոլոր խորհրդակցությունների արձանագրությունները:

## ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳԻՐՔԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ.—

Նոտարական գիրքը վարում են այն գյուղխորհուրդները. որոնց տերիտորիայի վրա չկան դատարանի ատյանին կից նոտարական գրասենյակներ, կամ նոտարական սեղան:

Նոտարական գիրքը ծառայում է նոտարական այն բոլոր գործողությունների գրանցման համար, որոնք օրենքով կարող են կատարել գյուղխորհուրդները և մասնավորապես քաղաքացիների անձնական իրավունքներին և շահերին վերաբերվող միայն այն փաստաթղթերի պատճենների գրացման համար, որոնցից 1937 թ. հունիսի 3-ի (1937 թ. օրենքների ժողովածու

№ 37, հոդ. 149) օրենքով թույլատրվում է գյուղխորհրդին վկայագրել պատճեններ, (անկախ նրանից, գանձված է նրանցից միասնական տուրք, թե նոտարական գործողությունը կատարված է անվճար):

Գիրքը պետք է լինի համարակալված, ժապավենված և կնիքով ու շրջանային գործադիր կոմիտեի քարտուղարի ստորագրությամբ վավերացված, գրքում յեղած եջերի քանակության նշումով:

Գրքում ջնջումներ չեն թույլատրվում, բաց թողնումները պետք է գծված լինեն, ուղղումները, հավելագրերը և գծված բառերը գրանցման վերջում պետք է հիշատակված լինեն գյուղխորհրդի նախագահի կամ քարտուղարի ստորագրությամբ:

Նոտարական գործողությունների բովանդակությունը գրանցվում է գրքում կրճատ, օրինակ՝ «այս ինչ տողում ապրող քաղ. Իվան Իվանովիչ Իվանովի անունից, դատապաշտպանների կոլեգիայի անդամ Պիոտր Պետրովիչ Պետրովի անվան դատական գործը վարելու համար տրված հավատարմագրի վավերացումը»: Գրանցումները կատարվում են փաստաթղթի նոտարական վավերացում կատարելու որը:

Պայմանագրերի և հավատարմագրերի նոտարական վավերացման, փաստաթղթերի վրա ստորագրությունների իսկությունը հաստատելու ժամանակ, նոտարական գրքի մեջ գրանցվում են հետևյալ փաստաթղթերը՝ փաստաթուղթ տվող հիմնարկության անվան, այն տալու ժամանակի և նրա համարի նշումով:

1) Նոտարական գործողությունների կատարմանը մասնակցող անձնավորությունների անձը հաստատող փաստաթղթերը, յեթե դրանց գյուղխորհուրդը չի ճանաչում:

2) Հավատարմագրերը՝ յեթե պայմանագրում կամ այլ փաստաթղթում մասնակցողի փոխարեն հանդես է գալիս նրա հավատարմատարը:

3) Կանոնադրությունը, վորի հիման վրա հիմնարկությունը կամ կազմակերպությունը (իրավական անձը) կատարում է այս կամ այն գործողությունը:

4) Փաստաթղթերը, վորոնց հիման վրա գործում է տվյալ հիմնարկության կամ կազմակերպության ներկայացուցիչը, օ-



րինակ՝ վարչության ընտրության արձանագրությունը, պաշտոնի նշանակման փաստաթղթերը, հավատարմագիրը և այլն:

Նոտարական գործողությունները կատարելու համար գանձված միասնական պետական տուրքի գումարները գրանցվում են դրամական վճարումների ընդհանուր անդորրագրային գրքում (ձեվ № 22–ա), վորը բաղկացած է անդորրագրից և արմատից: Անդորրագիրը տրվում է տուրքը վճարողին, իսկ անդորրագրի արմատները պահվում են գյուղխորհրդում:

## ԱԿՏ ԱՆԱՍՈՒՆԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ.—

Գյուղական վայրերում անասունների անկման յեղակի դեպքերի ժամանակ ակտը կազմում է գյուղխորհուրդը, գյուղխորհրդի նախագահի կամ նրա կողմից լիազորված գյուղխորհրդի անդամի միջոցով, անասունի անկման մասին գրավոր կամ բանավոր հայտարարություն ստանալու որը:

Միևնույն տնտեսությունում միաժամանակ մի քանի անասունի անկման, ինչպես նաև ապահովագրման գումարը 2,000 ռուբլուց ավել կազմող անասունի անկման դեպքում, ակտը կազմում է ապահովագրական տեսուչը:

---

Խմբագրեց Մ․ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գ․ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Թարգմանեց Ա․ ԱՆՏՈՆՅԱՆ
Սրբագրիչ Ա․ Բաղալյան

Գլավլիտի լիազոր Ա․ 2195
Պատվեր 63
Տիրաժ 2000

Ц 1940 г.
Акт № 313
Вкладн. л.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0185407

165 15

Арм.
3-4392а